Ազգ

'Azg armenian daily

10 ՓԵՏՐՈՒԱՐ 2000 ՇԱԲԱԹ 23 (1991)

Չեչնիայի Հանրաքեսությունը հատո՞ւկ կարգավիճակ է ունենալու

ԳՐՈԶՆԻ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ռուսաստանի նախագահի պատասխանատու օգնական Սերգեյ Յաստրժեմբսկին չի բացառում, որ Չեչնիայի Հանրապետությունը կարող է հատուկ կարգավիճակ ունենալ Ռուսաստանի Դաշնության կազմում: Յաստրժեմբսկու ասելով, Չեչնիայի Հանրապետության կարգավիճակի որոշումը հնարավոր է հանրաքվեի անցկացման ճանապարհով: Ըստ նրա, հավանաբար կանցկացվեն նաեւ նոր ղեկավարների ընտրություններ:

Մոսկվան դեմ է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի այցին

ՄՈՍԿՎԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՍՆԱՐՔ: Ռուսաստանի կառավարությունը դեմ է Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարի փետրվարի 16-ին նշանակված այցին: ՌԴ արտգործնախարարությունում գտնում են, որ այն առաջարկությունները, որով Ռոբերտսոնը նախատեսել է ժամանել, կառուցողական բնույթ չեն կրում: Թե խոսքը ինչի մասին է, ճշված չէ: Ինչպես հայտնի է, այժմ Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերությունները սառեցված են Հարավսլավիայում Դաշինքի գործողությունների պատճառով, որը խստորեն քննադատվել է Մոսկվայի կողմից:

ՆՍՏԱՇՐՋԱՆ

Խորհրդարանը հիշեց ազգային անվտանգության եւ սեփականաշնորհման մասին

Վարչապետին առաջարկվում են խաղի նոր կանոններ

ՆԱՐԻՆԵ ԴՈԼԲԱՐՅԱՆ

Էներգետիկ հանձնաժողովի ծրագրի քննարկումը խորհրդարանում առիթ դարձավ ազգային անվտանգության եւ պետական շահերի ոգեկոչման: Աժ-ն հիշեց, որ իր խնդիրը ոչ միայն առանձին օրինագծեր եւ նախաձեռնություններ առաջարկելն է, այլ նաեւ պետության տնտեսական ռազմավարության ճշգրտումը: **«Ազգը»** փետրվարի 9-ի համարում անդրադարձել է էներգետիկ ցանցերի սեփականաշնորհմանը, եւ երեկ պատգամավորական գրեթե բոլոր խմբակցությունները, բացառյալ «Միասնության», ձեւակերպեց էներգետիկ համակարգում սեփականաշնորհման դրական եւ բացասական հետեւանքների վերլուծության հրամայականը: Պետական հանձնաժողովի հարցերի նախագահ Վիկտոր Դալլաքյանը փաստեց, որ էներգետիկ ցանցերի սեփականաշնորհումը ՀԲ-ի կողմից միակողմանի առաջարկվող պայմաններով կարող է Հայաստանի համար ավարտվել ոչ միայն սոցիալական, այլեւ տնտեսական ու քաղաքական անկանխատեսելի հետեւանքներով: Հայաստանն ինքը պետք է որոշի ազգային անվտանգության հիմք հանդիսացող ոլորտներում սեփականաշնորհման իր ուղեգիծը: Պատգամավորը մի անգամ եւս ընդգծեց, որ, ցավոք, Հայաստանը դեռեւս չունի էներգետիկ զարգացման հայեցակարգ:



Տես էջ 8

ՀԱՅՐԵՆԱՊԱՐՀ

Զորավար Անդրանիկի աճյունը կբերվի Հայաստան փետրվարի 17-ին

ԵՐԵՎԱՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ կառավարությունը՝ վերածնելով Սպարապետ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությունն ու անսալով կազմակերպությունների, մտավորականության, հասարակության եւ սփյուռքահայ միությունների կոչին, Զորավարի փափագին՝ մահից հետո ամփոփվել հայրենի հողում, հանուն Հայրենիքի ընկածների շիրիմների կողքին, Ֆրանսիայի իշխանություններին դիմել էր ազգային հերոս Զորավար Անդրանիկի աճյունը Հայաստան տեղափոխելու խնդրանքով:

Ինչպես «Նոյյան տապանին» հայտնում են ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության եւ քարոզչության վարչությունից, աճյունը Փարիզից Երեւան կտեղափոխվի փետրվարի 17-ին: Փարիզ մեկնող պատվիրակությունը կգլխավորի Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը: Փետրվարի 15-ին Պեր-Լաշեզ գերեզմանատանը, այնուհետեւ Փարիզի Հովհաննես-Մկրտիչ մայր տաճարում կկատարվեն հոգեհանգստյան արարողություններ:

Փետրվարի 18-19-ը Զորավարի աճյունը կդրվի Երեւանի Մարզահամերգային համալիրում, ապա կտեղափոխվի էջմիածին: Փետրվարի 20-ին էջմիածնի Մայր տաճարում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի գլխավորությամբ կկատարվի հոգեհանգստյան արարողություն, որից հետո աճյունը կտեղափոխվի Եռաբլուր եւ հողին կհանձնվի իր ոգեկիր զինակցի՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի շիրիմի հարեւանությամբ:

ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է Զորավարի աճյունի վերահուղարկավորման հանձնաժողով՝ ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանի գլխավորությամբ:

Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումն՝ օրվա նյութ

Միջկուսակցական սոցիալ-տնտեսական խորհրդում

ԱՌՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Վերջին շրջանի աղմկահարույց հարցերից մեկի՝ էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման կապակցությամբ երեկ հավաք էր հրավիրել միջկուսակցական սոցիալ-տնտեսական խորհուրդը: Վերջինը նպատակ ուներ բազմակողմ քննարկումով ճշգրտելու, այնուհետեւ հրապարակելու մասնակից կուսակցությունների միացյալ տեսակետը խնդրի լուծման վերաբերյալ: Հարցադրումները պարզ էին. արժե՞ առհասարակ սեփականաշնորհել ռազմավարական կարեւորություն ներկայացնող այդ ոլորտի էներգահամակարգի բաշխիչ ցանցերը, իսկ եթե արժե, ապա ի՞նչ պայմաններով: Թեպետ ավարտուն փաստաթղթի տեսքով իրենց եզրակացության հրապարակումը խորհրդի անդամները հետաձգեցին, սակայն միացյալ տեսակետը քննարկումներում գրեթե լիովին ուրվագծվեց:

Խորհուրդը տագնապով արտահայտվեց սեփականաշնորհման հեռանկարի մասին, քանզի, ինչպես եւ հանրությունը, մտավախություն ունի, թե կկրկնվի Արմենտելի ճակատագիրը, որի դառը պտուղները մինչ այժմ քաղում ենք: Քանի որ նույնպես ռազմավարական կարեւորություն ունեցող ոլորտը՝ կապը, լիովին հանձնվեց «օտարին», ինչպես նշեցին խորհրդի անդամները, պիտի բացառենք մի ողջ ոլորտ, մենաշնորհի կարգավիճակով, որեւէ մեկ կազմակերպության «հանձնելու» տարբերակը: Թեպետ այս դեպքում, որքան հայտնի է, սեփականաշնորհման մրցույթը վերաբերում է լոկ բաշխիչ ցանցերին, իսկ բարձրավոլտ գծերն ու էլեկտրակայանները մնում են «անձեռնմխելի» պետության սեփականություն: Բանավեճի ընթացքում կարծիք հնչեց, որ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման տարբերակն անընդունելի չէ, եթե պետությունը շարունակելու է հանդիսանալ 51 եւ ավելի տոկոսի բաժնետեր այսպիսով վերահսկելով ոլորտի հետագա արդյունավետ աշխատանքը: Կարծիք կար նաեւ, թե ժողովրդին էլ պիտի բաժնետոմսեր վաճառվեն, սեփականաշնորհումից հետո էլ ոլորտում պիտի մրցակցություն լինի, որպեսզի սակագների բարձրացումը կանխվի, թեպետ մրցակցության աստիճանը երկրի ներկայիս տնտեսական պայմաններում դժվար իրագործելի խնդիր է եւ այլն:

Տես էջ 2

Ասոմ Էգոյանի ֆիլմը Կանադայում խլեց 4 գլխավոր մրցանակ

Հունվարի 30-ին Կանադայում ամեն տարի կայացող «Ջինի» միջազգային մրցանակաբաշխությանը մեր հայրենակից Ասոմ Էգոյանի վերջին «Ֆելիսիայի ճանապարհորդությունը» ֆիլմն արժանացել է 4 գլխավոր մրցանակների: Էգոյանն անձամբ ստացել է գլխավոր մրցանակը ռեժիսուրայի համար, մինչ գլխավոր դերասան Բ. Հասգինզը, օպերատոր Փ. Սարոսը եւ երաժշտության հեղինակ Մ. Դանային՝ մյուս 3 մրցանակները:

Իսրայելի օդուժը նորից հրթիռակոծեց Լիբանանի տարածքը

ԿԱՀԻՐԵ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Իսրայելական ինքնաթիռներն այսօր նոր հարվածներ են հասցրել Հարավային Լիբանանի տարածքին: Ստացված հաղորդումներից հետեւում է, որ հրթիռակոծման են ենթարկվել այսպես կոչված անվտանգության գոտու մերձակա Բեքաայի հովտի Տաբել ադ Դահարի շրջանը, ինչպես նաեւ Նաբաթիա քաղաքի արվարձանները եւ Վադի ալ Հուջեյր շրջանը: Նշված շրջանները դիմադրության գրոհայինների կողմից օգտագործվում են որպես հենակետ բուֆերային գոտում հարձակումներ կատարելու համար: Իսրայելի զինվորական ներկայացուցիչը հաստատել է Լիբանանի տարածքին հարվածներ հասցնելը, որոնք հետեւել են «Հզբոլահի» գրոհայինների կողմից իսրայելա-լիբանանյան սահմանի մերձակա Ազզիա արգելադեռի հրթիռակոծումից մեկ ժամ անց:

Կոստիս Ստեֆանոպուլոսը վերընտրվեց Հունաստանի նախագահ

ԱԹԵՆՔ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 8-ի ուշ երեկոյան Հունաստանի խորհրդարանը երկրորդ ժամկետով Կոստիս Ստեֆանոպուլոսին վերընտրել է Հունաստանի նախագահ: Ըստ որում, ինչպես հաղորդում է ԻՈՆԱ գործակալությունը, հետաքրքրական է, որ առաջին անգամ Հունաստանի նոր պատմության մեջ եւ կառավարող կուսակցությունը, եւ ընդդիմադիր ուժերը պաշտպանել են միացյալ թեկնածուի: Հունական խորհրդարանը, կազմված 300 պատգամավորներից, քննարկել է մի քանի թեկնածություններ, բայց մեծամասնության աջակցությունը ստացել է գործող նախագահի թեկնածությունը: «Կողմ» է քվեարկել 269 պատգամավոր, 19-ը՝ ձեռնպահ, երկուսը չեն մասնակցել քվեարկությանը:

Իրանը նախապզուշացնում է Բաղդադին

ԹԵՀՐԱՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի հեղափոխական ընտրազորի ղեկավարը դիմել է Իրաքի կառավարությանը՝ կոչ անելով միջոցներ ձեռնարկել սահմանափակելու մոջահեդների կազմակերպության գործունեությունը: Ըստ Բի Բի Սի ռադիոկայանի հաղորդման, դիմումի մեջ ասվում է, որ եթե պաշտոնական Բաղդադը միջոցներ չձեռնարկի, Իրանի զինուժերը հարկադրված կլինեն դիմել վճռական քայլի: Հայտարարությունն արվել է Թեհրանում կազմակերպված պայթյուններից հետո, որոնց համար Իրանի կառավարությունը մեղադրում է մոջահեդներին: Նշվում է, որ իրանցիները կարող են օդից եւ ցամաքից գրոհել մոջահեդների Իրաքում եղած ռազմահանգրվանները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Աղամանդագործությունը Հայաստանի ամենահեռանկարային ճյուղերից է

Ցույց է տալիս DCA-ի օրինակը

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Երեկ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելեց DCA աղամանդի գործարան, մանրամասն տեղեկացավ արտադրության ընթացքին, մոտ մեկուկես ժամ առանձնազրույց ունեցավ ընկերության գործադիր տնօրեն Գագիկ Աբրահամյանի հետ, որից հետո լրագրողներին հայտնեց իր տպավորությունները: Նախագահը խոստովանեց, որ ինքը ակտիվ մասնակիցն է մոտ մեկուկես տարի առաջ DCA ՊՓԲԸ-ն բրիտանական «Ֆուրֆանո» ընկերությանը վաճառելու գործարքին, որի երկուստեք պարտավորությունները, նրա գնահատմամբ, լիարժեք կատարվել են, դեռ մի բան էլ ավելին: ՀՀ նախագահի կարծիքով աղամանդագործությունը Հայաստանի ամենահեռանկարային ճյուղերից մեկն է, հետեւաբար ոլորտը պետք է լիովին մասնավորեցվի: Աղամանդի բիզնեսում փորր ներդրումներով կարելի է մեծ հաջողություններ հասնել, որի ամենավառ օրինակը թերեւս DCA-ն է:

Տես էջ 2

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

«Միջազգային աջակցություն բանտարկյալներին» հասարակական կազմակերպությունը փետրվարի 9-ին նշեց իր իսկ կողմից հրատարակվող «Հուսաստղ» պարբերականի նորամուտը: Հայաստանում կալանավորների ու դատապարտյալների իրավունքներին հետամուտ այս կազմակերպությունը թեպետ գրանցվել է 98 թ. սակայն հիշյալ բնագավառում իր առաջին նշանակալից քայլը համարում է «Հուսաստղի» հրատարակումը: Կազմակերպության նախագահ Սպարտակ Գեւորգյանը նշեց, որ համագործակցում են ազատազրկման վայրերի բարեփոխումների մեծ փորձառություն ունեցող անգլիական «Բանտային միջազգային բարեփոխումներ» կազմակերպության հետ եւ նրանց կուտակած փորձը կքանան ներդնել մեր հանրապետությունում: «Ուզում ենք հասնել նրան, որ ամբողջությամբ բափանցիկ լինի ազատազրկման վայրերի գործունեությունը եւ դրան հասնելու համար անչափ կարեւորում ենք «Հուսաստղի» հրատարակումը: Կարծում ենք, թերթը կարող է վեր հանել անգամ ամենափոքր խնդիրը, որպեսզի նրան լուծում տվի», հայտնեց կազմակերպության նախագահը:

Պարբերականի խմբագիր Վարդան Մաթեւոսյանն առանց ներքին գործերի ու արդարադատության նախարարությունների աջակցության անկարելի է համարում այդ բնագավառին մոտենալը: Քանի որ պարբերականի շնորհանդեսին իրավապաշտպան կազմակերպություններից բացի, մասնակցում էին նաեւ պաշտոնյաներ նշված երկու նախարարություններից եւ, մասնավորապես, մի քանի ազատազրկման վայրերի պետեր, ուրեմն խմբագրությունը կարող է լիահույս լինել նրանց աջակցությունն ստանալու հարցում: Իսկ մենք, այնուամենայնիվ, չենք կարողանում պատկերացնել ազատազրկման վայրերի թափանցիկությունը կամ կալանավայրերի գործունեությունը հասարակության համար բաց դարձնելը, քանի որ այն մշտապես փակ համակարգ է եղել, եւ ՆԳՆ քրեական պատիժների իրականացման վարչության պետի տեղակալ Հակոբ Հարությունյանին (ՆԳ նախարարի եղբայրն է) խնդրեցինք իր տեսակետը հայտնել հարցի վերաբերյալ:

«Այս թերթը ճիշտ կներկայացնի ազատազրկման վայրերի պատկերը»

«Հուսաստղի» շնորհանդեսին համոզմունք հայտնեց քրեական պատիժների իրականացման վարչության պետի տեղակալը

– Ազատազրկման վայրերը ոչ ամբողջապես, բայց հիմնականում բաց են: Մենք հասարակությանը չենք ուզում ներկայացնել դատապարտյալների քանակը, բայց անհրաժեշտ է, որ հասարակությունն իմանա, թե ինչպես են պահվում դատապարտյալները, նրանց իրավունքները պաշտպանվո՞ւմ են, թե՞ ոչ: Ցավոք, միշտ չէ, որ մամուլը ճիշտ է ներկայացնում իրավիճակը: Ինձ թվում է, այս թերթն ամբողջությամբ կներկայացնի իրականությունը:

– Ինչո՞վ եք համոզված, որ այս թերթը ճիշտը կներկայացնի, իսկ մյուսները՝ ոչ:

– «Հուսաստղի» ստեղծման հարցով զբաղվել ենք արդարադատության նախարարության աշխատակիցների հետ, համագործակցում ենք եւ սխալներ թույլ չենք տա:

– Ինչպիսի՞ն կգնահատեիք ազատազրկման վայրերի «բնակիչների» ներկայիս վիճակը եւ ի՞նչ դժվարություններ ունեք այդ ոլորտում:

– Հանրապետության ամենադժվարին պայմաններում հնարավոր ամեն ինչ արվում է եւ կալանավորների, եւ դատապարտյալների համար՝ սննդի, հագուստի, բեկուզեւ իրավական պաշտպանության հարցերով: Օրենքները նոր են ընդունվում եւ դրանցով հնարավորություն կտրվի, որպեսզի դատապարտյալներն արդեն իրավունք ունենան դիմելու բոլոր ատյաններին, նույնիսկ արտասահմանյան իրավապաշտպան կազմակերպություններին: Մշտապես եղել է եւ այսօր էլ գործում է ՀՀ դատախազության համապատասխան վարչությունը, որը հսկողություն է սահմանում մեր համակարգի վրա՝ դատապարտյալների պահպանման հարցում: Դատապարտյալները միշտ էլ իրավունք ունեցել են նրանց բողոքարկելու անձնակազմի աշխատակիցների սխալ վերաբերմունքը՝ նամակագրական կապերով եւ այցելությունների ժամանակ: Մենք հասկանում ենք, որ հանրապետությունը ֆինանսապես վատ վիճակում է գտնվում, այդ պատճառով էլ ծանրաբեռնվածությունը հիմնականում ընկնում է մեր վարչության վրա: Պետք է կարողանանք սնունդ հայթայթել, սեզոնային հագուստով ապահովել նրանց:

– Կալանավայրերի գերծանրաբեռնվածության մասին հաճախակի է խոսվում, հատկապես երբ ֆինանսական դժվարություններ ունեք, չե՞ք գտնում, որ որոշակի թերթեր հանցագործությունների դեմքում կալանք կարելի է չկիրառել:

– Այդ մասին շատ է խոսվել եւ, կարծում եմ, նոր օրենսդրությունը կանդրադառնա հարցին: Ճիշտ եմ համարում, որ թերթ հանցագործությունների դեմքում նպատակահարմար չէ մարդկանց կալանավայրեր ուղարկելը, կարելի է այլ պատժատեսակներ կիրառել, օրինակ, տուգանքը: Այս հարցում դժվարություններ չկան, պարզապես դատարանը պետք է կիրառի դրանք:

– Ձեր կարծիքով Հայաստանի ազատազրկման վայրերը նպաստո՞ւմ են մարդու վերադաստիարակմանը, կարծում եմ, դրան հասնելու լավագույն ուղին կալանավորների զբաղվածության հարցի լուծելն է, որը նրանց մոտ նոր հետաքրքրություններ կառաջացնի:

– Մի քիչ ծանր հարց է, եթե մարդն անդաստիարակ եղել է, ընտանիքում, դպրոցում չի դաստիարակվել, մեզ մոտ առավել եւս բարդանում է այդ խնդիրը: Հանցագործն ընկնում է այնպիսի միջավայր, որտեղ գուցեեւ իրենից վատն են եւ մի քանի անգամ ծանր հանցագործություններ են կատարել, դրանց հետ շփվելով, ավելի վատն է դառնում: Խնդիր ունենք նրանց դաստիարակելու, բայց ոչ բոլորի վրա է ազդում եւ ոչ բոլորն են վերափոխված վերադառնում հասարակություն: Այսօր դժվար է այդ հարցին լուծում գտնելը, երբ ամբողջ հանրապետությունում աշխատանք չկա, մեզ մոտ առավել եւս բարդանում է: Դատապարտյալների զբաղվածությունը ներկայումս շատ վատ վիճակում է, նրանց մինչեւ 10 տոկոսն է աշխատանքով զբաղված, մնացածն անգործության են մատնված: Ուզում են աշխատել, բայց հնարավորություն չունեն նրանց աշխատանքով ապահովվելու: Ուստի վերադաստիարակման աշխատանքը տարվում է զրույցների, բացատրությունների ձեւով, գրականություն է տրամադրվում, հեռուստացույց...

– Կալանավայրերը հեռուստացույց ունե՞ն:

– Հեռուստացույց կա բոլոր գաղութներում, արդեն մեկուսարանների խցերում էլ են թույլ տալիս հեռուստացույց դիտել:

ՍԱՄՍՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՒՅԺ

Վախճանվեց Սերգեյ Աթաբեկյանը



Փետրվարի 8-ին, 62 տարեկան հասակում վախճանվեց անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, Երեւանի պետական համալսարանի երկարամյա դասախոս Սերգեյ Աթաբեկյանը:

Հուղարկավորությունը՝ փետրվարի 10-ին, ժամը 2-ին:

Հասցեն՝ Նորքի 2-րդ զանգված, Դավիթ Մալյան փողոց, շենք 6, բն. 3:

Լրագրող Մանվել Մարգարյանն անպարտ է հռչակվել

Փարիզի «Յառաջ» թերթից տեղեկանում ենք, որ հայաստանցի լրագրող Մանվել Մարգարյանն անպարտ է հռչակվել Ստամբուլի դատարաններից մեկի կողմից: Լրագրողը մեղադրվել էր մամլասենյակից հնարաբերի գիրք մամլանենգելու մեղադրանքով: Դատարանը ենթադրել է, որ Մարգարյանի մոտ հայտնաբերված գիրքը հնագիտական արժեք չունի, եւ պատահածը թյուրիմացություն է:

ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Աղամանդագործությունը Հայաստանի ամենահեռանկարային ճյուղերից է

Սկիզբը էջ 1

Հիշեցնենք, որ DCA-ն (Diamond Company of Armenia) հիմնադրվել է անցյալ տարի մայիսին, երբ ընկերության 100 տոկոսանոց սեփականատերը դարձավ «Ֆուրֆանո լիմիթիդ» ընկերությունը, որը աղամանդագործության գերհսկա հարավաֆրիկյան «Դե Բիրս» սինդիկատի անդամներից մեկն է: Ներկայումս ընկերությունն ունի նաեւ 6 մասնաճյուղեր՝ «ԱՎԱ», «Ուրարտու», «Փունջ», «Աղամանդ 999», «Ջեյ ընդ Քեյ», եւ «Բի Էս»: Ձեռնարկությունը տարեկան մշակում է մոտ 100 հազ. կարատ հումք, որը ներմուծվում է «Դե Բիրսի» «Դիամդել» ընկերությունից: 1999 թվականին ընկերությունն արտահանել է շուրջ 32 մլն ԱՄՆ դոլարի պատրաստի արտադրանք, բացառապես արեւմտյան շուկաներ: Այսօր, փաստորեն, DCA-ն ՀՀ ամենամեծ արտահանող ընկերություններից մեկն է: 2000 թվականի առաջին կիսամյակում միայն արտահանվող արտադրանքի ծավալը կկազմի մինչեւ 20 մլն ԱՄՆ դոլար: Ի դեպ, ստացվող ալմաստն ու պատրաստի արտադրանքը մախվում են հենց ընկերության տարածքում՝ մախատան աշխատակիցների կողմից: Ներմուծումն ու առքումն իրականացվում է «Բրինս» միջազգային առեւտրային ընկերության միջոցով: Ընկերության այս տարվա ծրագրերի համաձայն նախատեսվում է շահագործման հանձնել բարձր տեխնոլոգիաների մասնաշենքը, որն ամսական կտրվածքով 2500 կարատ հումք ու կունենա 100-ից ավելի աշխատող: Ընկերության ներկայիս աշխատատեղերը հասնում են 300-ի: Դրա հետ մեկտեղ շահագործման կհանձնվի նաեւ աշխատողների համար նախատեսված 200 տեղանոց միջազգային ստանդարտներին համապատասխան ճաշարանը: Այս տարվա երկրորդ կիսամյակում նախատեսված է նաեւ շահագործման հանձնել ոսկերչական գործարանը, որի նախագծման աշխատանքներն այսօր արդեն կատարվում են Շվեյցարիայում:

Երեկ նախագահի հետ քննարկվեց նաեւ աղամանդի հումքի ներկրման հայ-ռուսական պայմանագրի վերականգնման հարցը, որին, ըստ DCA-ի գործադիր տնօրենի, նախագահի կողմից խոստացվել է ընթացք տալ: Հիշեցնենք, որ անցյալ տարի կնքված պայմանագրով 30 հազար կարատն այդպես էլ չներմուծվեց Հայաստան, իսկ նախատեսված նոր պայմանագրով այդ ծավալը պետք է ավելանա մինչեւ 200 հազարի:

Նախագահ Քոչարյանին ուղեկցում էր նաեւ ՀՀ պետական եկամուտների նախարար Սմբատ Այվազյանը, որը հայտնեց, որ 98 թվականի 1.5 ամսվա ընթացքում DCA-ն մուծել է 17 մլն, իսկ անցյալ տարի 170 մլն դոլարի հարկեր: Նախարարը կարծիք հայտնեց, որ, լինելով արտահանող ձեռնարկություն, DCA-ն, ճիշտ է, ազատված է ԱԱՀ-ից, բայց դա պետք է տարածվի նաեւ ներքին շրջանառության վրա: Գ. Աբրահամյանն էլ, որպես պատասխան հարկատու, նշեց, որ դժգոհ չէ հարկային քաղաքականությունից եւ առաջարկեց հարկային դաշտից դժգոհող գործարարներին մեղքը փնտրել իրենց մեջ:

Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումն՝ օրվա նյութ

Սկիզբը էջ 1

Թե որտե՞ղ էր ճիշտ ելքը ստեղծված իրավիճակից, երբ, ինչպես արտահայտվեցին խորհրդի անդամները, սեփականաշնորհում է պարտադրվում արտաքին ուժերի կողմից, ցույց կտա ժամանակը: Իսկ այսօրվա իրողությունը, ըստ խորհրդի տվյալների, հետեւյալն է. էներգահամակարգում ածանցված գերնորմատիվային կորուստներն աճել են 2.5-3 անգամ, նույնքան էլ աճել է աշխատակիցների թիվը հիշյալ ոլորտում: Հետաքրքրական ու հակասական միտումավիճակ, երբ նվազում է արտադրության ծավալը, իսկ փոխարենն ավելացվում են հաստիքները: «Ո՞րն է պատճառը եւ ինչպե՞ս պայքարել այս փաստի դեմ», հարցադրեցին խորհրդի անդամները՝ միաժամանակ ածանցագրելով, որ էներգահամակարգն այսօր ունի 35 հազար աշխատակից: Այդ մարդիկ, ըստ նրանց, փաստորեն իզուր աշխատավարձ են ստանում, շատերն էլ չարաշահումների ու յուրացումների դիմում, իրոք, այդպես է: Սակայն քննարկվեց նաեւ հակառակ տարբերակը, առանց այդ էլ հիմնարկություններում կրճատումներ են եւ՝ ապագայում էլ սպասվում են, ուրեմն եղած գործազուրկների թվին պիտի ավելանան էլի՞ հազարավորները: Գործազրկությունն արտագաղթի ամենաառաջին ու գլխավոր խթանն է: Սիա վտանգ, որ ածանցագրվեց քննարկման ընթացքում: Հնչած հակադիր կարծիքներում էլ նշվեց, որ պետք է առաջնորդվել ոչ թե վերոհիշյալ կարճակյաց ու ժամանակավոր ելքերը նախընտրելով, այլ մտածել բնականոն ելքի մասին, որն է արդյունաբերությանը զարկ տալ, ինքնաստինքյան կստեղծվեն եւ աշխատատեղեր:

Խորհուրդը որոշեց միացյալ փաստաթուղթը կազմել ոչ թե եղած իրականության այսուհետ մերժման, այլ աստիճանական բարեփոխումների իրենց տարբերակն առաջարկելու սկզբունքով: Մինչ փաստաթղթի հրապարակումը վճռվեց համաձայնություն հայտնել սեփականաշնորհման գաղափարին, բայց ոչ առաջարկված ծեւին: Խորհրդի անդամները համոզված են, որ պետության բաժնետոմսերի 51 եւ ավելի տոկոսի սեփականատերը հանդիսանալու տարբերակը պիտի անպայման իրագործվի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊՍՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՍԵՓԱԿԱՆԱՇՈՐՀՈՒՄ

«Բաշխիչ ցանցերի վաճառքը անխուսափելի է, բայց պետք է զգույշ լինենք»

ՀՀ էներգետիկայի նախարար Դավիթ Զադոյանը պարզաբանում է

Ինչպես բազմիցս տեղեկացվել է, մայիսին սպասվում է հանրապետության հերթական ռազմավարական նշանակության ոլորտի էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումը: Եվ ինչպես ցույց է տալիս դեպքերի զարգացումը, կարելի է ենթադրել, որ այս սեփականաշնորհման շուրջ խոսակցությունների «խմորը դեռ շատ ջուր կվերցնի»: Մեր թերթն էլ, առաջնորդվելով գործընթացը հնարավորինս լուսաբանելու ու համակողմանի քննարկման առարկա դարձնելու ցանկությամբ, այս թեման դարձրել է իր ուշադրության առարկաներից մեկը: Վերջին երկու հրապարակումներից մեկում մենք գրել ենք սեփականաշնորհմանը մասնակցող ռուսական հայտնի ընկերության «Իտեռայի» հավակնությունների ու ռուսական կողմի պարտադրանքների ու միջազգային կազմակերպությունների մտահոգությունների մասին, մյուսում բոլորովին հակադիր մի կարծիք նույն այդ կառույցների պարտադրանքների մասին: Տեղեկացնենք, որ այսօր Համաշխարհային բանկը հրավիրել է ասուլիս, որտեղ կհստակեցվի ՀԲ կարծիքը վերոհիշյալ սեփականաշնորհման ընթացքի մասին: Բոլոր կողմերի կարծիքների բազմազանությունն ապահովելու նպատակով «Ազգը» դիմեց ՀՀ էներգետիկայի նախարար եւ վերոհիշյալ սեփականաշնորհման հանձնաժողովի նախագահ Դավիթ Զադոյանին:

– Կառավարությունը գնում է այն բանին, որ անպայման սեփականաշնորհվեն բաշխիչ ցանցերը: Նպատակն ավելի շատ ներդրումներ ներգրավելն է ու ցանցն ավելի կարգին վիճակի բերելը: Երկրորդը հավակնությունները ամբողջությամբ կարողանանք իրականացնել:

Մենք պետք է անպայման գնանք այդ քայլին, բայց պետք է շատ զգույշ լինենք, որովհետեւ սոցիալապես անպատահով խավ կա, որին պետք է անպայման պաշտպանել:

– Պրն Զադոյան, մտավախություն կա, որ այս սեփականաշնորհմամբ կրկնվեն ԱրմենՏելի սխալները, երբ մի ամբողջ ոլորտ դառնում է դրսի ընկերության մոնոպոլիա եւ որի հետեւանքները Արմենտելի օրինակով արդեն ակնհայտ են՝ պարբերաբար առաջացող խնդիրներ, որոնք լուծումներ չեն ստանում:

– Ասում են՝ աղքատի տունը միշտ կոիվ է լինում: Մենք քաջիք ենք: Երբ պետությունը մի փոքր ոտքի կանգնի, անպայման իր սոցիալապես անպատահով խավերին կսկսի պաշտպանել: Իսկ ոտի կանգնելու ճանապարհը ներդրումներն են: Ասացել, ո՞րն է տարբերությունը ձեռնարկությունը պետական է, թե ոչ պետական, միեւնույն է, հարկեր պետք է տա: Եվ եթե հարկերը տալու խնդիր կա, ապա, հավատացեք, սեփականաշնորհումից հետո բյուջեն կստանա ավելին, որովհետեւ հավաքագրումներն ամբողջությամբ կլինեն: Երկրորդ վաճառքի գումարով պետությունն ինքն ինչ-որ հոգսեր կհոգա:

– Ձեր կարծիքով ո՞րն է ճիշտ. նման ռազմավարական նշանակության ոլորտը օտարերկրյա ներդնողին վաճառե՞լը ավելի մեծ գումարներով ու պայմաններով, թե՞ տեղացիներին՝ ավելի մեղմ պայմաններով ու ցածր գումարներով:

– Հայտարարված է միջազգային մրցույթ, իսկ մեր տեղական ներդնողները, ընկերությունները չունեն այդքան գումարներ, որ կարողանան մասնակցել եւ մտնել այդ բեռի տակ, որը խայտառակ բաց է: Եթե ուզում էին, թող մասնակցեին: Նույն կոնյակի պատմությունն է դառնում, հայտարարվեց վաճառքի մասին, ոչ մեկը չմասնակցեց, հետո երբ որ սեփականաշնորհեցին վերջացրին, բոլորը վեր կացան ու հայտարարեցին, որ ավելի շատ գումարներ կտային: Դե թող տային: Հիմա սա է:



– Եթե տեղացի ներդնողները այդքան եկամտաբեր չեն համարում այստեղ ներդնում կատարելը, այդ դեպքում արտասահմանցի ներդնողի շահագրգռությունը ո՞րն է:

– Նրանք իրենց շուկան են ընդլայնում, գումար ունեն, եւ այդ գումարը պետք է օգտագործեն:

– Իսկ կարելի՞ է ենթադրել, որ կառավարությունը դիմում է որոշակի զիջումների, պայմանների մեղմացման, որպեսզի ինչքան հնարավոր է դրսից շատ ներդնողներ ներգրավվեն...

– Ճիշտն ասած, լավ կլիներ, որ ավելի շատ զիջումների գնայինք, բայց առաջմ մենք չենք գնում դրանց: Օրինակ, տեսնում՝ եք, կառավարությունն իր ձեռքում տոկոսներ է պահում: Այս դեպքում էլ մենք նախատեսել ենք ունենալ «ոսկե ակցիա», որը թեկուզ մեկ տոկոս էլ լինի, կարող է ազդել այն վաճառվելիք 51 տոկոսի վրա: Արդեն գրվել է, որ բաժնետոմսերի 20 տոկոսն ուզում ենք տալ Եվրոբանկին, չորս տոկոսը բաշխելու ենք աշխատակազմի մի մեջ, 5 տոկոսը բաց է հայտարարվելու, մնացածը մնում է պետության ձեռքին:

– Իսկ դա չի՞ նշանակում, որ հետագայում կառավարությունը խնդիրներ կունենա:

– Ինձ թվում է ոչ: «Ոսկե ակցիայի» գաղափարը միշտ մնում է ուժի մեջ:

– Որպես հանձնաժողովի նախագահ ինչպե՞ս եք գնահատում սեփականաշնորհման գործընթացը:

– Դեռ նոր նախապատրաստական աշխատանքներն են, փաթեթը դեռ նոր պետք է կազմենք: Նախատեսել էինք մարտի 6-ին, բայց ոնց որ մի փոքր ուշանում ենք:

– «Ազգն» արդեն անդրադարձել է միջազգային կազմակերպությունների մտավախություններին, ռուսական մի ընկերության՝ «Իտեռա» կորպորացիայի խնդրին, եւ այն կարծիքին, որ նա վերջին պահին է մտել նախաորակավորված 4 ընկերությունների ցուցակ եւ չի ներկայացրել հստակ պայմաններ...

– Մեր հանձնաժողովը կարծում է, որ եթե մի ընկերություն համապատասխանում է առաջադրված պայմաններին, ինչո՞ւ պետք է դուրս թողնենք նրան: Ուսումնասիրելով մենք տեսանք, որ հիմք չունենք «Իտեռային» դուրս թողնելու: Իսկ, օրինակ, մյուս ռուսական ընկերության ՌԱՕ ԵԷՍ-ի պարագայում կային հիմքեր, եւ մենք չընդգրկեցինք: Միջազգային աուդիտը չէր անցել, ֆինանսական խնդիրներ ուներ եւ այլն:

– Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ միջազգային կազմակերպությունների մտահոգությունները....

– Ես չեմ ուզում մտնել այդ քաղաքականության մեջ, որպես էներգետիկայի նախարար ինձ ավելի շատ հետաքրքրում է տնտեսական կողմը:

– Իսկ ի՞նչ կասեք քաղաքական պարտադրանքների մասին: Հիշեցնենք ռուսական գազի պարագան, որը հաջողությամբ կարող է օգտագործվել որպես խաղաքարտ:

– Ես այդպես երբեք չեմ մտածել: Գազը երբեք չեն անջատել, մուտքը մեկ օրով ընդամենը պակասեց: Հաջորդ օրը վերականգնվեց: «Իտեռան» շատ վաղուց էր հեռագիր տվել, թե պարտքերը փոխանցեք, եթե չեք տալիս, կանջատենք: Դա սովորական աշխատանքային ընթացք էր, մենք էլ մի օր փողը ուշացրել էինք, հենց այդ օրն էլ անջատել էին, ավելի շուտ նվազեցրել ծավալները:

– Անցած սեփականաշնորհումները կապվում են կոնկրետ անձերի ու նախարարների անվան հետ: Որպես էներգետիկայի նախարար, դուք, անշուշտ, ունե՞ք ձեր պատասխանատվությունը այս խոշոր գործարքում:

– Եթե ուշադրություն եք դարձրել, տենդերային հանձնաժողովում ընդգրկված են 6 նախարարներ, որոնք կրում են պատասխանատվությունը: Որպես նախարար ինձ համար շատ կարեւոր է, որ բաշխիչ ցանցերը լավ գնվեն, լավ պայմաններ ստեղծվեն եւ մեր պետության համար, եւ ներդնողի, որպեսզի համատեղ կարողանանք աշխատել, ներդրումներն արագ կատարվեն, տեխնոլոգիական կորուստները կպակասեն, եւ նյութական պատասխանատուների ինստիտուտի վիճակը թեթեւանա: Հիմա նրանց վիճակը բավականին ծանր է, ցանցերում իրոք կան կորուստներ, իսկ ներդրումները կբերեն, կհասցնեն կորուստների վերացման:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՅԻ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՑԱՆՑԵՐ

Ռուսական հայտը

«Իտեռան» պարզաբանում է

Հայաստանյան չորս էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման միջազգային մրցույթին մասնակցելու հայտի համար այսօր պայքարում են չորս միջազգային ընկերություն: **«Ազգը»** դիմեց «Իտեռայի» ներկայացուցչին՝ պարզաբանելու, թե «Հայռուսգազարդի» բաժնետեր եւ ֆինանսական գործառույթների պատասխանատու ռուսական այս ընկերությունը ինչպե՞ս է պատրաստվում ընդլայնել իր գործունեության ասպարեզը՝ գազի բնագավառից անցում կատարելով էներգետիկ ոլորտ: «Իտեռայի» էներգետիկայի բաժնի պետ Վիկտոր Ժմուրկոն հայտնեց, որ մեր բաշխիչ ցանցերի միջազգային մրցույթով սեփականաշնորհմանը մասնակցելու միասնական հայտ է ներկայացրել «Ռոստներգոատոմի» հետ: «Իտեռայի» ներկայացուցիչն ընդգծեց, որ հաջողության հասնելու պարագայում «Իտեռան» եւ «Ռուստներգոատոմը» կհիմնեն միջազգային կոնսորցիում, որին կարող են անդամակցել նաեւ էներգետիկ ոլորտում հայտնի եւ ֆինանսական ներուժ ունեցող այլ ընկերություններ: Վիկտոր Ժմուրկոն չբացառեց այն տարբերակը, ըստ որի ռուսական ընկերությունները էներգետիկ բաշխիչ ցանցերի գնման արժեքի դիմաց Հայաստանին կարող են առաջարկել բնական գազ, որը կենսական նշանակություն ունի հայաստանյան տնտեսության զարգացման եւ կենսապահովման համար: Շմոռանանք, որ Հայաստանը իր սպառած գազի դիմաց դեռեւս ունակ չէ կանոնավոր վճարումներ կատարելու:

Ուշագրավ է «Ռոստներգոատոմ» ընկերության մասնակցությունը էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհմանը: Փաստենք, որ «Ռոստներգոատոմն» այն ձեռնարկությունն է, որը միջուկային վառելիքով է սպասարկում Հայաստանի ատոմակայանը՝ հընթացս ՀԱԷԿ-ին աջակցելով տեխնիկատնտեսական բոլոր խնդիրներում: Գազի եւ ատոմային էներգետիկայի բնագավառներում ռուսաստանյան ընկերությունների դիրքերն ամուր են, եւ խնդիրը երրորդ բնագիծն է՝ բաշխիչ ցանցերը: **«Ազգը»** հետաքրքրվեց, թե «Իտեռան» չի՞ կարծում, որ ՀԲ-ն հավանություն չի տալիս ռուսական ընկերությունների հավակնություններին, հատկապես, եթե վճարումը պետք է կատարվի գազով. Վիկտոր Ժմուրկոն պատասխանեց, որ իրենք գործում են համապատասխան հայտարարված մրցութային պայմանների, եւ կարծում են, որ իրենց առաջարկները կգնահատվեն տնտեսական նպատակահարմարության եւ արդյունավետության տեսանկյունից:

Ն. Գ.

ԱՐՁԱԳԱՆՔ

Հրանտ Բագրատյանի ցնցող խոստովանությունը

Փետրվարի 4-ին «Ա1+»-ի «Հետգրություն» հաղորդման ժամանակ Արամ Աբրահամյանի հյուրն էր նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը: Հիշենք, որ շատ չէր անցել նախկին ՀՀՇ-ականի ելույթից եւ նրա այդքան շուտափույթ էկրանին հայտնվելը բավական անսպասելի էր: Ինքը Աբրահամյանը, դրան այսպիսի բացատրություն տվեց, իբր Բագրատյանի ելույթին չէին առարկել, ըստ երեւույթին դա նրանից էր, որ ճիշտ, հակաճառություն չընդունող բաներ էր ասել, եւ մարդիկ պարզապես հակաճառելու տեղ չէին ունեցել: Չգիտեմ, թե որքանով է սույն բացատրությունը հիմնավորում կարճ ժամանակամիջոցում նախկին վարչապետի էկրանի վրա երկու անգամ երեւալը, բայց որ այդ օրվա նրա պատասխաններն ամբողջն տարակուսանք էին առաջացնում, բացահայտ է:

Հարցազրույցի ժամանակ պրն Բագրատյանը որոշ հարցերից ուղղակի խույս էր տալիս, իսկ որոշ հարցերի, օրինակ, սեփականաշնորհումների հետ կապված հարցերին նրա պատասխանները ոչ միայն համոզիչ չէին, այլեւ հեռու էին անկեղծ լինելուց: Նույն ձեւով նա պատասխանեց կոնյակի գործարանի եւ մյուս օբյեկտների սեփականաշնորհման նպատակահարմարության մասին տրված հարցերին:

Սակայն ցնցողը հողի սեփականաշնորհման կապակցությամբ տրված հարցի պատասխանն էր: Հեռուստադիտողը հարցնում էր՝ ճի՞շտ էր սեփականաշնորհումն այն ժամանակ, երբ հողը մասնատվում էր, կտոր-կտոր լինում, որոնց մեջ մեծ տեխնիկա չէր կարող մտնել, իսկ գյուղացին մինի տեխնիկա չուներ: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ մեծ տեխնիկան էլ սեփականաշնորհվեց, եւ այդ տեխնիկան չնչին գումարներով ձեռք բերողները պարզապես սարկական վիճակի մեջ դրեցին գյուղացուն առասպելական գումարներ պահանջելով ամենափոքր աշխատանքի դիմաց: Խոսենք մանր հողակտորների մասին: Այստեղ եթե մեծ տեխնիկա չէր մտնում, ապա բահով եւ ձեռքի փոցխով մշակելն անհնար էր: Դրա համար էլ գյուղացին կենտրոնացավ տնամերձների վրա: Շատերը հրաժարվեցին սեփականաշնորհված հողերից կամ էլ հողը դրեցին առվույտի եւ կորնգանի տակ, որոնք ոռոգելուց բացի ուրիշ տեսակի աշխատանքներ չեն պահանջում: Արարատյան դաշտի բարեբեր հողերի համար, դա վաստակաբերն լուծումն է: Այսպիսով, պրն Բագրատյանի եւ մյուսների ջանքերով Հայաստանը վերածվեց պարտելային եւ բնատնտեսական գյուղատնտեսության երկրի, այսինքն հարյուր տարով ետ նետվեցինք:

Նման սեփականաշնորհումը Բագրատյանը համարեց ճիշտ: Սակայն ցնցողը հարցի երկրորդ մասի պատասխանն էր: Այստեղ արդեն նախկին վարչապետն անկեղծացավ եւ բառացիորեն ասաց. «Եթե մինի տեխնիկա լիներ, էլ ինչո՞ւ էինք հողը սեփականաշնորհում»:

Կարկամել կարելի է: Ուրեմն, եթե գյուղացին հնարավորություն ունենար հողը մշակելու չէին սեփականաշնորհի, եւ հողը տրվել է գյուղացուն հենց նրա համար, որ չկարողանա մշակել: Մտածելն անգամ սարսափելի է, բայց ի՞նչ կարող ես անել, Բագրատյանը բառացիորեն այդպես էլ ասաց: Հիմա արդեն կարելի է հասկանալ պրն Բագրատյանի իր վարչապետության տարիներին թույլ տված մի շարք արտառոց արտահայտությունները, ինչպես օրինակ. «Պարտադի՞ր է, որ ամեն մարդ պանիր ուտի», եւ կամ՝ «Տարեք ձեր շկաֆները վաճառեք»:

Այսպիսով, էգ կով պահելու կոչ անող նախկին վարչապետը փոխանակ տագ անի, կոնյակի գործարանը վաճառելու գնով իր համար տաքուկ տեղ ապահովող պաշտոնը վայելի, աջ ու ձախ ելույթներ է ունենում արդարացնելով ժամանակին իր թույլ տված խայտառակությունները եւ վարկաբեկում ներկա իշխանություններին, որոնք ինչքան ժամանակ չեն կարողանում շտկել նրա ավերածությունները:

Դառնանք պրն Աբրահամյանին եւ ասենք, թե ինչու այլեւս չեն առարկում Բագրատյանին... Սակայն դրա կարիքը չկա, ինքն էլ լավ գիտի, թե սովորաբար ում չեն առարկում:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

65-ամյակ

Զորի Բալայանի հանդիպումից ելույթը

Տասնչորս տարի առաջ՝ Զորի Բալայանի 60-ամյակին նվիրված երեկույթի ժամանակ ես մի դրվագ պատմեցի մեր խորհրդարանական առօրյայից, երբ 407 պատգամավորներ (սարսուռ կնշեմ, թե որտեղից է առնված այդ սուլոցի թիվը) դարձան նույնիսկ շատ բան տեսած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճի համար մի հազվագյուտ տեսարանի վկաներ: Այդ հոբելյանական երեկույթի ավարտից հետո ինչ-որ մեկը ակնհայտ հեգնանքով ինձ անվանեց ոչ այն է Հանս Անդերսեն, ոչ այն է Սյունհաուզեն, ուզենալով ասել, թե նման հանդիսավոր ելույթ չէր կարող լինել: Մեկ ուրիշ անգամ խորհրդարանային այդ նույն հիշարժան դրվագի մասին պատմեցի հեռուստացույցի էկրանից: Դարձյալ ինչ-որ մեկը կասկած հայտնեց, թե նման համաժողովի ամբիոնից հազիվ թե հնարավոր է հանդիսավոր ճակատամարտ տալ, բերելով բազմաթիվ թվեր եւ օրինակներ:

Եվ ահա օրերս իմ տնային արխիվում հայտնաբերեցի ԽՍՀՄ կարմիր գինանշանով մի սղագրական հաշվետվություն: Երկրորդ մաս: 3-10 հոկտեմբեր, 1989 թ.»: 45-րդ էջում գրառում կա. «Միության խորհրդի եւ Ազգությունների խորհրդի 1989 թ. հոկտեմբերի 3-ի համատեղ նիստի թ. 8 տեղեկագիր: Բովանդակությունը. «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման ընդունումը «երկաթուղային տրանսպորտի եւ ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի անխափան աշխատանքի ապահովման անհետաձգելի միջոցառումների մասին»: Հիշեցի այդ օրը մանրամասնություններով: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովի աշխատասենյակում մենք՝ Հայաստանից, Ղարաբաղից եւ Ադրբեջանից եկած մի խումբ պատգամավորներս, ինքնակենտրոն հարցը, պատրաստում էինք որոշման նախագիծ: Գործը, ինչպես ասում են, հասնում էր արյունահեղության: Խեղճ՝ Նիկոլայ Իվանովիչը հազիվ էր զսպում Զորին, որը գրեթե կոիվ էր սկսել Վեզիրովի հետ: Հենց այնտեղ էլ Ռիժկովը հայտնեց Գորբաչովի խնդրանքը, որը վարելու էր նիստը: Նա խնդրել էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակները, պայմանավորվելով, ճանապարհների աղաբջատիկման հարցի ինքնակման ժամանակ չարձարծեն Ղարաբաղի, Սումգայիթի, փախստականների հարցերը, այլապես մենք կբեղվենք եւ չենք հասցնի ընդունել կարեւոր որոշումը:

Եվ ահա նիստն սկսվեց: Նախագահող Միխայիլ Գորբաչովը Ռիժկովի զեկուցումից հետո ձայնը տվեց մի քանի պատգամավորների, որոնք համառոտակի եւ հստակորեն արեցին կոնկրետ առաջարկություններ ու դիտողություններ: Վերջապես ամբիոն բարձրացավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Աբդուլ Ռահման Խալիլ օղլի Վեզիրովը: Մենք քարացանք: Կարծես թե պայմանավորվել էինք, որ մեզանից ոչ մեկը ելույթ չի ունենալու: Մտածում էինք, թե Ադրբեջանի ղեկավարը կխոսի ճանապարհների աղաբջատիկման մեխանիզմների մասին: Եվ մեծ ամբոխավարը սկսեց այսպես. «Եթե այս հարցը կախված լիներ Վեզիրովից, ապա, ըստ իս, առհասարակ չէր ծագի»: Ապա. «Հիմա ես այստեղ պետք է հայտարարեմ, ընկեր պատգամավորներ, որ ճանապարհի բջջատիկմանը մասնակցում են ոչ թե երկաթուղայինները, այլ բնակչությունը... Ե՞րբ է վերջանալու մի հանդիպության միջամտությունը մյուսի ներքին գործերին»: Ընդսմին Աբդուլ Ռահմանը, իբր պայմանավորվածությունը կատարելով, չասաց, թե որ հանդիպությունների մասին է խոսքը: Բայց չկարողացավ իրեն երկար զսպել եւ անսպասելիորեն դուրս տվեց. «Ե՞րբ է լուծվելու 160 հազար ադրբեջանցիների ճակատագիրը, որոնք մեզ մոտ են եկել Հայաստանից»: Դահլիճում հրմշտոց լսվեց: Բայց երբ Վեզիրովն արտաբերեց «Ղարաբաղ» բառը, իմ հետեւում նստած Բալայանը տեղից վեր թռավ եւ սկսեց բարձրաձայն խոսել: Սղագրության մեջ այս մասում գրառում կա. «Տեղից (չի լսվում)»: Ապա նշված են Գորբաչովի խոսքերը. «Ընկերներ, ես կարծում եմ, որ այս տարրը («տարր» նշանակում է Ղարաբաղի թեմա-Հ. Ի.), որը հիմա այստեղ ի հայտ է գալիս, հարկավոր է բացառել: Եթե դուք ձայն խնդրեք (նա դիմում է Զորիին, որն արդեն տեղից վեր է կացել, մի քանի կարգ առաջացել եւ նստել կողքիս՝ հենց բազկաթոռի արմնկակալին- Հ. Ի.), ապա կարող եք ելնել եւ ասել այն, ինչ մտածում եք, եւ արտահայտել ձեր վերաբերմունքը ընկեր Վեզիրովի ելույթի նկատմամբ: Բայց եկեք հանգիստ լինենք. հնարավորության սահմաններում հարկավոր է զսպվածություն դրսեւորել»:

Վեզիրովը չմոռացավ ավելացնել, որ «ԼՂԻՄ-ի տարածքից ստիպված հեռացել են ավելի քան 10 հազար ադրբեջանցիներ»: Ես նկատեցի, թե ինչպես են սեղմվում Զորիի բռունցքները: Նրան ասացի. «Հիմա ես ելույթ կունենամ. դու ամբողջովին վերածվել ես նյարդերի կծիկի: Իսկ սիրտդ ընդամենը մի քանի ամիս առաջ են վիրահատել»: Բայց նա ինձ լսել անգամ չէր ուզում: Ասում էր, թե այս անգամ հարկավոր են թվեր, հարկավոր է շոշափելի փաստարկում: Վեզիրովը չէր հասցրել ամբիոնից հեռանալ, երբ Զորին ասիճաններով մոտեցավ խոսափողին:

Ընթերցողների ուշադրությանն եմ ներկայացնում ընկերոջս ելույթի սղագրությունը: Եվ թող նրան այդ բախտորոշ ժամանակներին վերադարձնելու փորձը իմ նվերը դառնա իմ հասունացած եւ փոքր-ինչ խոհեմացած ընկերոջը՝ Զորի Բալայանին, որին շնորհավորում եմ ոչ կլոր տարեթվի՝ 65-ամյակի առթիվ:

«Նախագահող. Խնդրեմ, ընկեր Բալայան:

Զ. Բալայան, Հայկական ԽՍՀ-ում «Լիտերատուրնայա գազետա»-ի սեփական թղթակից, քաղ. Երեւան.

Ես կարծում եմ, որ խախտված է մեր պայմանավորվածությունը: Մենք պայմանավորվել էինք, որ այսօր խոսելու ենք շրջափակման մասին եւ վերջում ընդունելու ենք որոշում, որի նախագիծը ներկայացրեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ ընկեր Ռիժկովը: Բայց պատգամավոր Վեզիրովի ելույթն ինձ ստիպում է մի քանի խոսք ասել:

Վերջին երկու օրերին հատկապես շատ է խոսվում ադրբեջանական ազգության փախստականների մասին, որոնք թողել են իրենց տները եւ հեռացել Հայաստանից: Բերվում են թվեր: Ես կուզենայի, որ ամեն ինչ ճիշտ ու ստույգ լիներ, որ Ազգությունների խորհրդի ազգային հաղթականության եւ ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գեորգի Տարազեւիչը տեղեկանք տար, թե քանի հայ է հեռացել Ադրբեջանից եւ քանի ադրբեջանցի՝ Հայաստանից, քանի ռուբլի փոխհատուցում է վճարվել ադրբեջանցիներին եւ քանի ռուբլի՝ հայերին: Նրան կանխելով, կհայտնեմ. հայերին չի վճարվել ոչ մի կոպեկ, ադրբեջանցիներին տրվել է 70 մլն ռուբլի:

Ինչ վերաբերում է թվերին, Հայկական ԽՍՀ-ից հեռացած 150 հազար ադրբեջանցիների կեսը կազմում են նրանք, ովքեր գտնվում էին աղետյալ գոտում: Նրանք հեռացան երկրաշարժից անմիջապես հետո: Մեր երկրին Նիկոլայ Ռիժկովի հաղորդած տվյալների համաձայն, անցյալ տարվա դեկտեմբերի 7-ից հետո անօթեւան է մնացել 700 հազար մարդ: Դրան գումարվել են Ադրբեջանական ԽՍՀ-ից հեռացած մոտ 300 հազար հայերը, չհաշված բախվեցի բազմահազար հայերին:

Տեղից. Ճիշտ չէ:

Բալայան Զ. Ճիշտ է, ճիշտ է: Մենք հիմա դա կարող ենք հաշվել: 50 հազար հայ հեռացել է Կիրովաբադից, 70 հազար՝ Խանլարի եւ Դաշքեսանի շրջաններից: 1979 թ. հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով Ադրբեջանում ապրել է 475 հազար հայ: Այսօր մոտ 150 հազար հայ մնացել է Լեռնային Ղարաբաղում, 22 հազար՝ Շահումյանի շրջանում եւ այսպես կոչված Խանլարի շրջանի 5 բնակավայրերում: Ադրբեջանական ԽՍՀ-ում մնացել է ընդամենը 180 հազար հայ: Մնացած բոլորը տեղահանվել են: Չարդախելու գյուղում, որի մասին երեկ այստեղ խոսում էր պատգամավոր Իգիթյանը, եւ որը երկրին տվել է երկու մարշալ, խորհրդային Միության երեք հերոս, պատերազմի 250 մասնակից, այսօր ոչ մի հայ չի մնացել: Եվ մենք այստեղ անընդհատ ասում ենք, թե Ադրբեջանական ԽՍՀ-ն առանձգական չէ, թե Հայաստանից հեռացել են ադրբեջանցի փախստականներ եւ նրանց տեղավորելու հնարավորություն չկա:

Մեր տվյալներով, Հայաստանից հեռացած յուրաքանչյուր ադրբեջանցու համար Ադրբեջանական ԽՍՀ-ում կա երկու մահճակալ: Ըստ որում, մեզ համար միանգամայն անհասկանալի է, թե ինչու Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդի որոշման առկայության պայմաններում, որտեղ նշված են Հայկական ԽՍՀ-ից հեռացած անձանց տեղավորման շրջանները, չգիտես ինչու մեսխեթցի թուրքերի հետ նրանց տեղավորում են Լեռնային Ղարաբաղում:

Պատգամավոր Վեզիրովն ասաց, թե Լեռնային Ղարաբաղից հեռացել է 10 հազար ադրբեջանցի: Բայց այնտեղից ոչ մի ադրբեջանցի չի մեկնել: Շուշիում եւ մի շարք այլ բնակավայրերում այսօր Հայկական ԽՍՀ-ից հեռացած ադրբեջանցի փախստականներն են: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում որոշում է ընդունվել, որ ադրբեջանցի փախստականներին պետք է տեղավորել միայն Լեռնային Ղարաբաղում, քանի որ այնտեղ բոլոր առումներով հարմար են կլիմայական պայմանները: Այդ որոշումն ընդունվել է մեկ շաբաթ առաջ:

Վերջինը: Ադրբեջանում որոշում է ընդունվել մշտական բնակության վայրերը հարկադրաբար լքած անձանց հետ աշխատանքի Ադրբեջանական ԽՍՀ պետական կոմիտե հիմնելու մասին: Ես դա համարում եմ ամենահիսկական սադրանք: Մինչդեռ Հայկական ԽՍՀ 29 հազ. քառ. կմ տարածքում, որտեղ այսօր մեկ միլիոն մարդ անօթեւան է (թող դա հաստատեն ընկերներ Ռիժկովը եւ Վորոնինը), նման կոմիտե չկա:

Իմ կարծիքով, Միխայիլ Սերգեեւիչ, հարկավոր է հիմա ընդունել այդ օրենքը, քանի որ այսօր մենք զբաղվում ենք միայն շրջափակմամբ: Հարկավոր է անհապաղ վերացնել շրջափակումը: Մենք ներկայումս մեծ սխալ ենք թույլ տալիս, ասելով, թե Հայաստանը երկու ամիս շրջափակման մեջ է: Պետական ազգային կազմավորում Լեռնային Ղարաբաղը շրջափակման մեջ է մեկուկես տարի: Արտաքին աշխարհը Լեռնային Ղարաբաղին կապող միակ «կյանքի ճանապարհը» Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհն է: Հենց այդ ճանապարհի մասին է խոսվում ԽՄԿԿ կենտկոմի եւ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 1988-1995 թթ. սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու միջոցառումների մասին» որոշման մեջ: Ասվում է, որ հարկավոր է այն վերականգնել, կառուցել, նույնիսկ նշվում է թիվ՝ 75 կմ: Ամենքս գիտենք, որ ճանապարհի երկարությունը 105 կմ է: Թվերը բերվում են ոչ պատահաբար: Դա միակ ճանապարհն է, հարկավոր է շտկել, լեռնանցքները բունելներով հատել՝ կարճացնելու նպատակով: Չգիտեմ, մեկուկես տարում ԽՄԿԿ կենտկոմին եւ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին որեւէ մեկը հաշիվ տվե՞լ է, որ կատարված չէ այդ որոշումը՝ չի վերականգնվել եւ չի կառուցվել ոչ մի մետր ճանապարհ: Այսօր Լեռնային Ղարաբաղը որպես ազգային կազմավորում ոչ թե շրջափակման, այլ պատերազմի մեջ է: Եվ դեռեւս ընդունված չէ, պատրաստ չէ դրա շրջափակմանը վերաբերող որոշումը:

Գտնում եմ, որ հարկավոր է վերացնել Լեռնային Ղարաբաղի շրջափակումն ու պատերազմը: Շնորհակալություն ուշադրության համար»:

Զորիի ելույթի վերջնամասում Գորբաչովը նյարդայնորեն զանգահարում էր, անընդհատ ասելով. «Ժամանակն սպառվել է», եւ անմիջապես մի տեսակ գույնը գցած արտաբերեց. «Գտնում եմ, որ ելույթները սրանով պետք է ավարտել: Եվ երկրորդը: Այս բանավեճը երկրին չհեռարձակել»: Չհեռարձակելու համար անհրաժեշտ էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի հատուկ որոշում: Եվ Գորբաչովն սկսեց իր սովորական հորդորանքը. «Ես գտնում եմ, որ չարժե հեռարձակել: Սա մեր ներքին գործն է: Լսելու դեպքում ամենը չէ, որ կհասկանան. սա շատ նուրբ հարց է: Չարժե շատրել... Կա ցուցադրելու առաջարկությո՞ւն: Եվ այսպես, առաջին առաջարկությունն է՝ սահմանափակվել մեր խոսակցությամբ եւ հեռուստատեսությամբ չցուցադրել: Խնդրում եմ քվեարկել: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 333 անդամ (407-ից) «կողմ» է քվեարկել: Շնորհակալություն: Կարծում եմ՝ մենք ճիշտ ենք վարվում»:

Ահա այսպես ամեն անգամ մեծ պետության ղեկավարը «ճիշտ էր վարվում», իսկ Զորի Բալայանն ամեն անգամ, ինչպես ասում են նրա Ղարաբաղում, իր էն էր բռնում... եւ հասնում էր նպատակին՝ մեր ընդհանուր նպատակին:

Այդ հիշարժան օրը իր օրգանական շարունակությունն ունեցավ ճիշտ մեկ շաբաթ անց: Սրանում կարելի է համոզվել՝ ընթերցելով վերոհիշյալ «սղագրական հաշվետվության» 210-216-րդ էջերը: Հոկտեմբերի 10-ին նստաշրջանը կրկին անդրադարձավ շրջափակման թեմային: Զեկուցում կարդաց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի առաջին փոխնախագահ Լեւ Վորոնինը: Ամբիոնին նրա մոտենալուց առաջ ես ու Զորին մոտեցանք նրան եւ խնդրեցինք, որ անպայման հիշատակի վառելիքի հարցը: Նրան ցույց տվեցինք Ղարաբաղի մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանի նախօրեին հղած հեռագիրը, որտեղ մտահոգություն էր արտահայտվում վառելիքի իսպառ բացակայության առնչությամբ, եւ, դատելով ըստ ամենայնի, ձախողվելու են աշնանացանի աշխատանքները:

Լեւ Ալեքսեեւիչը ազնվորեն կատարեց խոսքը. «Մեզ մոտ ամենածանր իրավիճակն ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Մենք այսօր եվլախ կայարան ենք հասցրել 63 ցիստեռն նավթամթերք, որն այժմ Ստեփանակերտից 105 կմ է հեռու: Առայժմ չի հաջողվում լուծել ցիստեռները Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք հասցնելու հարցը»:

Դահլիճի ձախ կողմում աղմուկ սկսվեց. այնտեղ նստած էին ադրբեջանցի պատգամավորները: Քննարկման ամենաթեժ պահին ելույթ ունեցա ես: «Ինձ, եւ ոչ միայն ինձ, զարմացնում են Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի ներկայիս արտակարգ պայմանները: Հասկանում եմ, որ խորհրդային Միությունում բազմաթիվ անհետաձգելի խնդիրներ կան, եւ դրանք բոլորը հավասարապես վերաբերում են ամենքիս: Բայց երբ ամենաթեժ կետը փաստորեն լության է մատնվում եւ միայն փաստեր են արձանագրվում, դա զարմանք է հարուցում: Ուզում եմ Գերագույն խորհրդին դիմելով, ասել միայն մեկ բան: Այսօր առանց չափազանցության կործանվում է խորհրդային Միության ժողովուրդներից մեկը: Ամեն տարի, ամեն օր եւ ամեն ժամ կարող է անուղղելի բան կատարվել: Շատ եմ ափսոսում, որ այստեղ չէ Գերագույն խորհրդի նախագահը: Այլեւս անհնար է հանդուրժել այս վիճակը: Կրկնում եմ, մենք մշտապես զբաղվում ենք փաստերի արձանագրմամբ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդում կոնկրետ ե՞րբ է քննարկվելու այս հարցը՝ տվյալ իրադարձության քաղաքական գնահատմամբ: Ահավոր իրադարձության, որ ներկայումս տեղի է ունենում երկրում: Անկախ ազգությունից, դիմում եմ դահլիճում նստածներից յուրաքանչյուրի խղճին: Քանի որ դրանից չի շահի ո՛չ Ադրբեջանը, ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ խորհրդային Միությունը: Այսօր դա ավելի կարեւոր է, քան կոոպերացիայի հարցը: Սա կենսականորեն կարեւոր հարց է»:

Ապա շարունակվեց Վորոնինի զեկուցման քննարկումը: Ինչ-որ մեկը բառացիորեն նետվեց զեկուցողի վրա եւ դահլիճով մեկ ցինիկաբար հարց տվեց. «Ինչո՞ւ ոմանց հակամարտությունների համար պետք է պատասխան տան ուրիշները»: Կողքիս նստած Զորին ականջիս շշնջաց. «Ես հիմա ամբիոն կբարձրանամ եւ այդ տականին կսպանեմ լոկ նրա հանդեպ իմ քամահրանքով, քանզի նա վստահ կլինի, թե անպայման արձագանքելու եմ իր սուտ արարքին: Բայց ես կխոսեմ միանգամայն այլ բանի մասին, ասես դահլիճում նրա ձայնը չի էլ լսվել: Նման վիժվածքներին չի կարելի գովազդել: Ես ուշադրություն դարձրի, որ հենց նոր դահլիճում հայտնվեց պաշտպանության նախարար Յազովը: Նա չգիտե, թե այստեղ ինչ է կատարվել, եւ ես ուզում եմ տեղեկացնել նրան: Հետո կասեմ, թե ինչի համար...»: Նա տեղից վեր կացավ, ձեռք բարձրացրեց եւ ինչպես միշտ, հրավերի չսպասելով, վազեց դեպի ամբիոն: Մեջբերեմ 213-214-րդ էջերի գրառումը:

«Լեւ Ալեքսեեւիչ, դուք ասացիք, որ շարժակազմերը գնում են ինչպես դեպի Հայաստան՝ աղետյալ գոտի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղ: Դուք այդպես էլ չպատասխանեցիք այն հարցին, թե ինչ կա այդ շարժակազմերում: Մեր տվյալներով, այսօր Ստեփանակերտում եւ Լեռնային Ղարաբաղի բոլոր գյուղերում մի գրամ վառելիք եւ փաստորեն մի գրամ ալյուր չկա: Ասացեք խնդրեմ, Դուք ինչպե՞ս եք ուզում լեռնային շրջանը ուղղաթիռներով եւ ինքնաթիռներով ապահովել այնպիսի մթերքով, ինչպիսին է հացը: Չէ՞ որ մենք հիանալի հասկանում ենք, թե աշնանն այնտեղ ինչպիսի եղանակ է լինում: Հացի մատակարարումը կախված կլինի եղանակից:

Իսկ երկրորդ հարցն ուղղում եմ Չեզ, Անատոլի Իվանովիչ: Արդյոք պետական, իրավական, քաղաքական գնահատական տվե՞լ է հանրապետության ինքնիշխանության մասին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության վերջերս ընդունած օրենքին, որտեղ ոչ միայն հոչակվում է խորհրդային Միության կազմից դուրս գալու Ադրբեջանի իրավունքը, այլեւ մշակվում է դրա մեխանիզմը: Փաստորեն ստացվում է, որ Ադրբեջանի հետ ԽՍՀՄ-ի կազմից կարող է դուրս գալ Լեռնային Ղարաբաղի ամբողջ հայ բնակչությունն՝ իր բոլոր հուշարձաններով, համաշխարհային քրիստոնեական ճարտարապետության գլուխգործոցներով, նախնիների գերեզմաններով: Քարի եղեռ պատասխանել»: Դա 1989 թ. հոկտեմբերին էր, երբ դեռ ոչ ոք չէր էլ մտածում ԽՍՀՄ-ի տրոհման մասին:

Ամբիոնից իջնելով՝ Զորին ուղղվեց դեպի վերջին կարգը, որտեղ նստած էր Դմիտրի Յազովը: Հինգ րոպե զրուցեց պաշտպանության նախարարի հետ: Մինչ դահլիճում շարունակվում էին բուռն բանավեճերը, նա հերթով նստեց ԽՍՀՄ գինված ուժերի գլխավոր շտաբի պետ Մ. Ա. Մոիսեեւի եւ ապա ներքգործնախարար Վ. Վ. Բակատինի մոտ:

Այդ երեկո հստակորեն նշանակված ժամերին երկուսով այցելեցինք հիշյալ երեք անձանց: Խոսվեց Ղարաբաղ վառելիք եւ ալյուր հասցնելու մասին: Վերջում Յազովի մոտ էինք: Մարշալի մոտ երկար նստեցինք: Դմիտրի Յազովը հենց աշխատասենյակից հրահանգներ տվեց 4-րդ բանակի եւ Ստեփանակերտի գնդի հրամանատարներին: Երբ դուրս եկանք նրա աշխատասենյակից, միջանցքում Զորին անսպասելիորեն սալտո կատարեց:

Երեք օր անց հեռագիր ստացանք Սեմյոն Բաբայանից, որը զեկուցում էր, որ Ղարաբաղ են հասցվել թե՛ վառելիք եւ թե՛ ալյուր: Ես խնդրեցի, որ ուրախության պահին Զորին կրկնի իր սալտոն: Բայց նա չկարողացավ դա անել: Պարզվում է՝ միշտ չէ, որ դա նրան հաջողվում է: Նրա վերջին սալտոն ես տեսա 1992 թ. մայիսի 9-ին, ազատագրված Շուշիում:

ՏԵՆԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ՈՄԲԱԿՈԾՈՒՄՆԵՐ

Մինչեւ ե՞րբ է շարունակվելու Իսրայելի ագրեսիան Լիբանանի դեմ

Ի կատարումն իր սպառնալիքների, իսրայելական օդուժը չխորտակեց Լիբանանի ենթակառույցները ռմբակոծելուց: Երեք էլեկտրակայանի հրթիռակոծման հետեւանքով հոսանքազրկվել է գրեթե ամբողջ երկիրը, այդ թվում մայրաքաղաք Բեյրութը: Խոսելով այդ ագրեսիայի նոր տակի մասին, Իսրայելի ներքին անվտանգության նախարար Շլոմո բեն Ամին նշել է, որ դա Սիրիային եւ Լիբանանին ուղղված ազդանշան էր սանձահարելու «Հզբոլահի» ուժերին, որոնք գրոհում են Լիբանանի հարավում գտնվող իսրայելական բանակի դիրքերի վրա: Բեն Ամին, սակայն, մոռանում է, որ լիբանանյան դիմադրությունը «հետեւանք է եւ ոչ թե պատճառ», եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 425 որոշումը շուրջ քառորդ դար է, ինչ պահանջում է Թել Ավիվի զորքերի անհապաղ հեռացում գրավյալ տարածքներից:

Բացի այդ, իսրայելական վերոհիշյալ ագրեսիան կոմիս խախտում է 1996 թ. «ապրիլյան փոխըմբռնման» համաձայնագրի, որը ստորագրել են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Սիրիան, Լիբանանը եւ Իսրայելը: Այդ փաստաթղթով հակամարտ երկու կողմերին արգելվում է հարձակումներ կատարել խաղաղ բնակչության դեմ:

Լիբանանի հարավն այսօր ճահիճ է դարձել Թել Ավիվի համար այնպես, ինչպես Վիետնամն էր Վաշինգտոնի համար, կամ Աֆղանստանը ԽՍՀՄ-ի: Այլ կերպ ասած, գրավյալ այդ տարածքում մնալը նույնքան վտանգավոր է ու կորստաբեր, որքան միակողմանի հեռանալն իսրայելական զորքերի համար: Այս ծանր դրությունից դուրս գալու նպատակով վերջիններս հաճախ են խախտում «ապրիլյան փոխըմբռնումը» նպատակ ունենալով ճնշում գործադրել պատասխանական Բեյրութի եւ, անուղղակիորեն, Դամասկոսի վրա, որոնք չեն թաքցնում իրենց աջակցությունը լիբանանյան դիմադրությանը: Իսրայելի հաճախակի դարձած «սպառնալիքները» միակողմանիորեն հեռանալու մասին, ինքնախաբեություն են միայն, քանզի տվյալ պարագայում նախ բանակը խայտառակ կորուստներ կունենա նահանջելիս, միեւնույն ժամանակ, չի ապահովվելու նրա անվտանգությունը լիբանանյան ճակատում: Ուստի, կամա թե ակամա Թել Ավիվը հարկի է նստելու գրավյալ հողերից դուրս գալու Դամասկոսի եւ Բեյրութի արդար պահանջների հետ, համապարփակ կարգավորման համաձայնագրի շրջանակում: Այլապես կարող է տապալվել առանց այդ էլ սայթաքող «Մադրիդի» խաղաղության ողջ գործընթացը:

Իսրայելի պատրվակը, թե «Հզբոլահի» պայքարն է խանգարում խաղաղ կարգավորման բանակցությունների վերսկսմանը, նույնպես անհեթեթ է: Իսկ ճշմարտությունն այն է, որ Թել Ավիվը չի կարող եւ չի ցանկանում հաշտվել արաբական գրավյալ բոլոր հողերն ազատելու մտքի հետ, ինչպես նախատեսվել է Մադրիդի վեհաժողովում, որը հիմնված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 242,338 եւ 425 բանաձեւերի վրա: Ժամանակն է, որ եբրայական պետությունը համոզվի անհնար է միաժամանակ կորզել թե հողերը եւ թե անվտանգությունը:

ԱՌԴԱՐԻՆԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Զյուգանովը «ազգային կարկանդակի պատառ» է խոստանում յուրաքանչյուր ռուսաստանցու

ՄՈՍԿՎԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ռուսաստանի կոմկուսի ղեկավար Գենադի Զյուգանովն այսօր մամլո ասուլիսում ներկայացրեց իր նախընտրական ծրագիրը, որը հակիրճ ձեւակերպված է ծրագրային 7 թեզերում:

Ժողովրդահայրենասիրական ուժերի նախագահական թեկնածուն խոստանում է Ռուսաստանի բնական հարստություններն օգտագործել «ամբողջ ժողովրդի եւ ամեն մի առանձին ռուսաստանցու օգտին»: Ամեն մի ռուսաստանցի, ասվում է առաջին թեզում, կստանա «բաժին հանրապետության սեփականությունից ազգային կարկանդակի պատառ»:

Ծրագրի երկրորդ կետը վերաբերում է ոգելից խմիչքի եւ ծխախոտի պետական մենաշնորհ մտցնելուն: «Օղու փողերը՝ գանձարան, այլ ոչ թե ավազակներին» կոչ է անում կոմկուսի ղեկավարը:

Երրորդ թեզը՝ «աշխատել եւ վաստակել», խոստանում է առաջիկա երկու տարում յուրաքանչյուրին ապահովել «երաշխավորված աշխատավայրով եւ արժանապատիվ վաստակով»:

Զյուգանովն առաջարկում է կրկնակի նվազեցնել արտադրական ապրանքների եւ սպասարկումների հարկերը եւ նույնքան էլ վառելիքի գները, էներգիայի, տրանսպորտի եւ կապի սակագները:

Հինգերորդ թեզը՝ «բավական է ժողովրդին նվաստացնել աղքատությամբ», նախատեսում է կենսաթոշակների, սոցիալական նպաստների, բյուջետային աշխատողների աշխատավարձերի անհապաղ բարձրացում կրկնակի:

«Հանուն ազգի ապագայի» կարգախոսի ներքո խոստում է տրվում երկու տարվա ընթացքում լիովին ապահովել անվճար կրթություն ու բուժսպասարկում «ամենուրեք եւ յուրաքանչյուրի համար»:

Եվ վերջապես, յոթերորդ ծրագրային թեզը, որը վերնագրված է «Ժողովրդավարության ժողովրդավարացում», խոստանում է ժողովրդական ընտրյալների եւ ժողովրդի վերահսկողության տակ դնել գործադիր իշխանությունն ու ժողովրդական վստահության կառավարություն ձեւավորել:

Վրաստանի անվտանգության եւ պաշտպանության նոր համակարգի չորս հիմնական ուղղությունները

ԹԲԻԼԻՍԻ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: «Այսօր արդեն փաստորեն ավարտված է աշխատանքը Վրաստանի ազգային անվտանգության համադրության ստեղծման վրա եւ մոտ ժամանակներս՝ երկրի ազգային անվտանգության խորհրդում այն ներկայացնելուց հետո այդ կարեւոր փաստաթուղթը կներկայացվի խորհրդարանի հաստատմանը», հայտարարել է Վրաստանի նախագահը:

Պետության ղեկավարը հաղորդել է, որ սահմանված են երկրի անվտանգության եւ պաշտպանության նոր համակարգ ստեղծելու չորս հիմնական ուղղություններ: Դրանք են երկրի անվտանգության քաղաքականության ձեւավորումը, անվտանգության կառուցվածքի կազմակերպական ու գործառնական վերափոխումը, անվտանգության խորհրդային մոդելին վերջնականապես հրաժեշտ տալը եւ ժողովրդավարական հաստատությունների ուժեղացումը:

Նրա խոսքերով ասած, արտաքին մանցի մասնագետների աջակցությամբ արդեն եռանդուն աշխատանք է տարվում այդ բոլոր ուղղություններով բարենորոգումներ իրականացնելու համար:

Բաքուն ԱՊՀ-ի ամենաթանկ քաղաքներից մեկն է

ԲԱՔՈՒ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Economist Intelligence Unit-ի (Մեծ Բրիտանիայի «Economist» շաբաթաթերթի հետազոտական ստորաբաժանում) հետազոտության արդյունքների համաձայն, որը կատարվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ, այժմ Բաքուն թանկությամբ առաջ է անցել այնպիսի քաղաքներից, ինչպիսիք են Սանքտ-Պետերբուրգը, Պրահան, Վարշավան: «Economist»-ի հետազոտողները նշում են, որ 1999 թվականին Բաքվում կյանքը կտրուկ թանկացել է: Նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններից աշխարհի ամենաթանկ քաղաքների եւ երկրների ցանկում, բացի Ռուսաստանից, մտել է միայն Ադրբեջանը. Բաքուն աղյուսակում զբաղեցրել է 92-րդ հորիզոնականը: Այս ցանկում Մոսկվան զբաղեցնում է 38-րդ տեղը, սակայն Մոսկվայի համեմատությամբ շատ ապրանքներ Բաքվում ավելի թանկ են: Օրինակ Ա-95 բենզինը Մոսկվայում արժե միջին չափով 8 ռուբլի (0,27 դոլար), Բաքվում 1800 մանաթ (1 դոլարը 4400 ադրբեջանական մանաթ է) (0,41 դոլար), 1 կգ. բանանը Մոսկվայում արժե 20 ռուբլի (0,68 դոլար), Բաքվում 5000 մանաթ (1,14 դոլար), 500 գրամ սպիտակ հացը համապատասխանաբար 5 ռուբլի (0,17 դոլար) եւ 1000 մանաթ (0,22 դոլար), հավի միսը 37 ռուբլի (1,27 դոլար) եւ 9800-10800 մանաթ (2,22-2,45 դոլար), կարագը համապատասխանաբար 70 ռուբլի (2,42 դոլար) եւ 15000 մանաթ (3,41 դոլար): Քաղաքային ավտոբուսով երթեւեկությունը Մոսկվայում արժե 2 ռուբլի (0,06 դոլար), Բաքվում 500-1000 մանաթ (0,12-0,23 դոլար):

Ըստ որում Ադրբեջանում միջին աշխատավարձը պետական հիմնարկություններում կազմում է 15-29 դոլար, առեւտրային ձեռնարկություններում 50-70 դոլար:

Պատերազմից ավերված Աֆղանստանում մի բան այնուամենայնիվ լավ է արվում՝ ափիոնի արտադրությունը

20-ամյա պատերազմից ավերված Աֆղանստանը, որտեղ իշխանությունը բաժանված է իսլամ արմատականների եւ մրցակից ոստիկանների միջեւ, հարստանալու անսպառ պահանջ ունի, որը երկիրը դարձրել է աշխարհի ափիոնի առաջատար արտադրող: ՄԱԿ-ի տվյալներով՝ 1999 թ. Աֆղանստանն արտադրել է համաշխարհային ափիոնի 3/4-ը, որը ահռելի թիվ է կազմում՝ գերազանցելով «Ոսկե եռանկյունու» երկրներին (Բիրմա, Լաոս եւ Թաիլանդ): Տարբերվում են Միացյալ Նահանգների տվյալները, բայց այստեղ էլ առաջատարը Աֆղանստանն է, որի արտադրանքը սպառվում է Պակիստանում, Իրանում, Միջին Ասիայում, Ռուսաստանում: Եվրոպա մուտք գործող թմրադեղերի 90 տոկոսը աֆղանական ծագում ունի: Եթե ածը չնվազի, ափիոնը շուտով կհասնի նաեւ ԱՄՆ: Երկրի մեծ մասում իշխող «Թալիբանը» որոշ չափով ինքնաֆինանսավորվում է ափիոնի առեւտրի հարկերով: «Թալիբանը», իր իսկ հայտարարության համաձայն, պատրաստ է միանալ թմրադեղերի տարածման դեմ պայքարին, բայց դրա համար անհրաժեշտ է, որ իր կառավարության օրինականությունը ճանաչեն ամբողջ աշխարհում եւ ոչ թե, ինչպես այժմ, ընդամենը երեք երկիր՝ Պակիստանը, Սաուդյան Արաբիան եւ Արաբական Միացյալ Էմիրությունները:

Մյուս կողմից, շարունակվում են միջազգային դիվանագիտական ճնշումները «Թալիբանի» վրա, քանի որ երկրում արմատականալել է «սեռային խտրականությունը» (կանայք ենթարկվում են սարկական ճնշումների), ատելությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Սրան գումարած՝ երկրում պարբերաբար պատերազմվում է մահմեդական ծայրահեղականների առաջնորդ Ուսամա բեն Լադենը, որը մեղադրվում է անցած տարի 224 մարդու կյանք խլած ահաբեկչական պայթյունների մեջ՝ երկու ամերիկյան դեսպանատներում: Երբ հուլիսին Աֆղանստանը հրաժարվեց վերադարձնել Լադենին, Մ. Նահանգները դադարեցրեց երկրի հետ տնտեսական բոլոր հարաբերությունները, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հրամայեց սառեցնել «Թալիբանի» առաջնորդների հաշիվները: Սակայն ձեռք առնված միջոցները «Թալիբանին» չհամոզեցին, արտգործնախարար Վաֆիլ Ահմադ Մուքավաֆիլը հայտարարեց. «Մենք ձեռք չենք բարձրացի Ուսամա բեն Լադենի վրա: Նա ազատ կմնա նույնիսկ հակառակ Ամերիկայի կամքի»: Այդ քաղաքության պատճառներից մեկն էլ այն է, որ թմրադեղերի առեւտուրը «Թալիբանին» ապահովում է թե՛ ֆինանսական միջոցներով, թե՛ քաղաքական լծակներով:

Մեղադրանքներին պատասխանելով, «Թալիբանը» հայտարարում է, որ դեռ 1996 թ.-ից շատ առաջ էլ, մինչ Քաբուլի գրավումը, երկիրն արդեն կակաչի բազում պլանտացիաներ ուներ: Թմրադեղերի արքան պարբերաբար ծեւական քայլեր է անում՝ այրում է կակաչի պլանտացիաները, փակում ափիոն արտադրող լաբորատորիաները, այս տարի նույնիսկ խնդրեց ֆերմերներին ցանքերը կրճատել 30 տոկոսով, միաժամանակ արդարանալով, որ քաղաքական եւ բարոյական պատճառներով չեն կարող ճնշել ֆերմերներին: «Մենք դեմ ենք կակաչի ցանքերին, թմրադեղերի արտադրությանն ու օգտագործմանը, ասում է ԱՄՆ-ում «Թալիբանի» ներկայացուցիչ Աբդուլ Հակեմ Մուջահիդը, բայց չենք կարող պայքարել մարդկանց դեմ, որոնք մեր ազդեցության հիմքն են»:

Սակայն ճշմարտությունը երկու կողմ ունի. «Թալիբանը» հարկում է ոչ միայն կակաչի պլանտացիաները, այլեւ ուղղակիորեն հերոինի արտադրության լաբորատորիաները:

«Հերոինի առեւտրում իրար հետ յուղ ու մեղրի պես համագործակցում են հանցագործ տարրերը, կրոնավորները ու պատասխանական անձինք», համոզված է բավական երկար Աֆղանստանում աշխատած արեւմտյան իրավական մի գործակալ: Երբ երկրի ամենաարժեքավոր հումքի դաշտերը այրվում են, մախանենգները դրանց տերերին վարկ են տալիս, մոլլաները հաճախ աղոթում են ափիոնի բեռները տեղափոխելուց առաջ: Թալիբները, ի տարբերություն իրենց հակառակորդների, ապահովում են առեւտրականների անվտանգությունը: Վերոհիշյալ գործակալը տեղեկացրեց, որ 1995 թ.-ին Աֆղանստանում տեսել է Լադենին, որն իր մոջահեդների հետ զբաղվում էր թմրադեղերի տեղափոխմամբ՝ Իրանից Թուրքիա:

«Թալիբանի» մայրաքաղաք Կանդահարի թմրադեղերի արքան՝ Հաջի Բաշար Մուհամեդը, «Թալիբանի» առաջնորդ Մուհամեդ Օմարի մոտ ընկերն է եւ 1980-ականներին կռվել է խորհրդային զորքերի դեմ: Իսկ երբ 1996-ին թալիբները գրավեցին Քաբուլը, Բաշարն արդեն լավ տեղավորվել էր եւ ընդունեց նրանց: Նա իր լաբորատորիան Պակիստանից տեղափոխեց Կանդահար: Մախանենգները ափիոնի մեծ պաշարներ գնում են մեծ ուկաներում, որոնք հանցագործ սինդիկատների տիրապետության տակ են: Դրանցից ամենահայտնին գտնվում է Սանգին քաղաքում: Հոկտեմբերին այնտեղ եղավ ՄԱԿ-ի ներկայացուցիչ Բեռնարդ Բրահին, որը պարզեց, որ գլխավոր փողոցի 500 խանութներից կեսում ափիոն են վաճառում: «Մի առեւտրական ասաց, որ անցյալ տարի 2800 կգ ափիոն է վաճառել՝ մոտ 132.000 դոլար վաստակելով, Սանգինը վտանգավոր տեղ է: Մարդիկ երբեմն չեն վերադառնում այնտեղից»:

Բայց ավելի վտանգավոր են Իրանի, Տաջիկստանի եւ Պակիստանի հետ սահմանամերձ շրջանները: Ըստ պատասխանական տվյալների, 1983 թ.-ից Իրանում՝ թմրադեղեր տեղափոխողների հետ կռվում սպանվել է ավելի քան 2650 սահմանապահ: Բրիտանիան 300.000 ֆունտ է տրամադրել Իրանին՝ սահմանապահների համար զրահաբաճկոններ գնելու: Ֆրանսիայի մասնագետները կասկածում են աֆղանական հերոինի մաքրությանը. Արեւմուտքում պարբերաբար հոդվածներ են լույս տեսնում, որտեղ արծարծվում է այն թեզը, թե աֆղանական թմրադեղերը «անհավատներին» թունավորելու համար են: Իրականում աֆղանական հերոինը նույնքան էլ մահմեդականների դժբախտության պատճառ է դառնում: Սակայն ճակատագրի բերումով Աֆղանստանում ավելի փոքր թմրամոլ կա, քան Պակիստանում (մոտ 1 մլն) եւ տարածաշրջանի մյուս երկրներում, այնպես որ ափիոն աճեցնողներն անմիջականորեն չեն շփվում իրենց արածի ծանր հետեւանքների հետ: «Աֆղանստանն աղքատ երկիր է, որը գյուղատնտեսությամբ է զբաղվում», ասում է երբեմնի գրականության ուսուցիչ Գալամ Հազրաթը, որն այժմ իր 100 ակր հողատարածության վրա կակաչ է աճեցնում. «Անցած քսան տարիները քայքայել են մեր ճանապարհները, երկիրը, կրթությունը: Մեր միակ ունեցվածքը ափիոնն է»: 28-ամյա Շեր-Խանը իր հայրենի գյուղում 1,5 ակր հող ունի, որտեղ կակաչ է ցանել մեկ ամիս առաջ: Նա դրանից չի հարստանա, բայց մի 3000-4000 դոլար կաշխատի, որն այնքան էլ վատ չէ: Բայց Խանի լավ ապագայի երազանքները ավելացնում են երկրագնդի չորս ծայրերում առանց այդ էլ աճող մղձավանջը:

Ռ. ԱՇՈՏՅԱՆ
Ըստ «Նյուզուիքի»

ԱԶԳ

Մշակույթ

«Ուր վեհ էր երազն ու բախտը ժպտաց...»

Վահան Տերյանի սիրո առևնչվածը

«Ասոռանալ ամեն ինչ, ամեն ինչ մոռանալ, եւ ոչնչի ու ոչ ոքի մասին չմտածել: Իմ մասին էլ չմտածել հանգստանալ...»: Այս տողերը որեւէ բան հուշո՞ւմ են: Իհարկե, անմիջապես կասեմ՝ Տերյանի հանրահայտ բանաստեղծության մի փոքր փոփոխված տեքստն է: Կասեմ ու ցիրկ կլինեմ... մասամբ: Այս տողերը վերցված են Անթառամ Միսկարյանին Վահան Տերյանի ուղղած նամակից, որը թվագրված է 1909 թվականի հունվարի 18-ով: Կարճ ժամանակ անց մարտի 7-ին նույն հասցեով ուղարկված նամակում բանաստեղծը գրում է. «Ես գրիչ վերցրի ձեզ հետ շատ բաների մասին խոսելու համար, բայց հիմա, ահա, արդեն զգում եմ, որ չեմ կարողանա, եւ, այնուամենայնիվ, ստիպված պետք է գրույցը հետաձգել մինչեւ հանդիպում, որը, հուսով եմ, չի հարկադրի երկար սպասել: Թեեւ հասատ չգիտեմ, ինչի մասին կխոսենք ձեզ հետ, բայց չգիտես ինչու համոզված եմ, որ լեզուներս կբացվի, եւ չգիտես ինչու, ինձ միշտ թվում է, որ մենք այստեղ շատ լավ բարեկամներ կլինենք եւ որ այն ժամանակ շատ բան կունենանք, որի մասին անհարժեշտ կլինի խոսել: Իհարկե, դա կերեւա, երբ գամ, եւ երբ մենք «ասմին տանք» իրար, բայց միթե հիմա չունեմ ենթադրելու, որ չենք հիասթափվի մեր սպասումներից: Համենայն դեպս, ես գրեթե համոզված եմ, որ կսիրեմ ձեզ (այդ բառի լավագույն իմաստով. ես հիմա սովորել եմ շատ բարձր գնահատել «մարդկային» սերը, սերը մարդու նկատմամբ, այլ ոչ թե սեռի, նույնիսկ պատրաստ եմ ավելի բարձր դասել, գերադասել սեռական սիրուց, որը հազվադեպ է գեղեցիկ ու խորունկ լինում)...

Ինչպես այս, այնպես էլ ուրիշ շատ նամակներ (թվով 62 նամակ ուղղված Անթառամ Միսկարյանին եւ որպես հավելված 6 նամակ ուղղված Անթառամի քրոջը Մարթային) առաջին անգամ բնագրով (ռուսերենով) հրատարակվեցին Երեւանում, 1970 թվականին: Անձնական նամակնե՞ր են սրանք: Անշուշտ: Գուցե դա էր պատճառը, որ տարիներ շարունակ Անթառամ Միսկարյանը չէր համաձայնում այս նամակները հրապարակ հանել: Եվ միայն 1966 թվականի հոկտեմբերի 7-ին նա երեւան, իր ազգական Աշոտ Հովհաննիսյանին է ուղարկում բոլոր այն նամակները, որոնք Վահան Տերյանը հասցեագրել էր իրեն:

Ո՞վ էր Անթառամ Միսկարյանը, ինչո՞վ է նա կապվում Վահան Տերյանի կենսագրությանը:

1908 թվականի աշնանը եղբոր մոտ, Մոսկվայում հյուրընկալվող Անթառամը եղբոր ընկերոջ Կոլյա Վարագովի հետ փողոցով անցնելիս հանդիպում է Վահան Տերյանին: Հայկական եկեղեցու պատարագը լսելուց հետո Վահան Տերյանը առաջարկում է տուն վերադառնալ ոտքով: «Երեւի Վահանն ուզում էր ավելի մանրամասն իմանալ իմ մասին եւ առաջարկեց ոտքով վերադառնալ տուն: Ճանապարհին իմանալով, որ գնում եմ Խարկով սովորելու, ինձ համոզում էր, որ Մոսկվայում մնամ: Իսկ ես, մեղալակիր չլինելով, չէի ընդունվել Մոսկվայի դասընթացները, այդ պատճառով էլ որոշել էի Խարկովում սովորել, ուր եւ գնացինք եղբորս Դավթի հետ, Վահանի հետ ծանոթանալուց քիչ ժամանակ անց: Հետագայում Վահանը հաճախ կապակում էր. «Հենց ուզում էի Անտային առաջարկություն անել, մեկնեց...»:

17 ամյա Անթառամի (կամ Անտայի, ինչպես նրան անվանում էր Վահան Տերյանը) եւ 23 ամյա բանաստեղծի պատահական այս ծանոթությունը եթե չասենք ճակատագրական, առա գոնե շատ խոր հետք թողեց Վահան Տերյանի հոգում: Անչափ հետաքրքիր մի նամակագրություն սկսվեց Անթառամի եւ Վահանի միջեւ, որը շարունակվեց մինչեւ բանաստեղծի մահը: Այս մարդիկ միմյանց լավ էին հասկանում: Եվ ոչ միայն իրար զգում էին նույնիսկ հազարավոր վերստեր իրարից հեռու գտնվելով: 1919 թվականի դեկտեմբերի 27-ին Անթառամն իր ամուսնու հետ մեռնոսկովյան Սուդոնեւո գյուղում էր: Օրագրում այդ օրվա թվագրությամբ մի գրություն կա. «Երազումս տեսա, որ Վահանը մեռել է»: Իսկ ծանր հիվանդ Վահան Տերյանն այդ ժամանակ Օրենբուրգում էր: Թոքախտի սրացում էր նկատվել, եւ Տերյանը կնոջ Անահիտի հետ ապաստան գտավ կնոջ բարեկամներից մեկի տանը: Անահիտ Տերյանն իր օրագրում նշում է. «21-ի երեկոյան նա պառկեց եւ այլեւս վեր չկացավ...»: Բանաստեղծի հոգեվարքի օրերն էին, որ ավարտվեցին 1920-ի հունվարի 7-ին:

Ի՞նչ է սա. հեռազգացությո՞ւն, կանխագուշակո՞ւմ... Ոչ, պարզապես սեր է, մեծաստղով գրվող ՍԵՐ, որը բանաստեղծին բազմաթիվ հրաշալի պահեր պարգեւեց: Քիչ հանդիպեցին իրար, քիչ ժամանակ եղան միասին, բայց նամակներով փորձեց ամեն ինչ ասել: Ավելին արեց իր բանաստեղծություններում: Քառասունչորս տարի որեւէ երրորդ աչքից խնամքով պահված Տերյանի նամակներին ծանոթանալիս զգում ես, թե որքան մաքուր ու վեհ սեր է եղել այդ երկու մարդկանց միջեւ:

«Խաղաղ իրիկունով նստեցեք դաշնամուրի մոտ կիսախավարի մեջ եւ նվագեցեք որեւէ մեղմ, թախծոտ, զգվող, բարի, թեթեւ, արցունքներդ-ակամա հոսեն, ձեզ լավ կզգաք, եւ եթե հիշեք, որ ուր որ հեռուհեռու մեկը նստել է եւ թախծոտ է եւ երբեմն մտաբերում է ձեզ, ձեզ լավ կզգաք: Եվ եթե հանկարծ հիշեք, որ ձեր շուրջը եռում է «կյանքը», աղմկում ու իրար է անցնում այդ խելահեղը, նա կթվա հեռավոր ու սմանչելի. ինչպես ամեն մի հեռավոր բան եւ կուզենաք հանկարծ տեսնել որեւէ մեկին եւ նրա հետ զրուցել դասարկ բաների մասին» (1909 թ., 16 ապրիլի):

Կարդանք եւս երկու նամակ ուղղված Անթառամ Միսկարյանին: Առաջինը թվագրված է 1911 թ. սեպտեմբերի 9-ով, մյուսը 1912-ի օգոստոսի 13-ով.

«Համարյա ամեն օր մեր տանը, իմ լուսամուտի առաջ երգում ու նվագում են երգեհոնիկարները: Անասելի սիրում եմ փողոցային երաժշտությունը, եւ այդ վաս երգեցողությունը, եւ այն անսահման թախիծը, որ ինձ համակում է այդ ժամանակ...»:

«Դա մի տեսակ մեղմ, համակերպված, հեզ, թերեւս նույնիսկ ուրախագին թախիծ է, որը մեր մեջ ծնվում է, երբ անձնատուր ենք լինում հուշերին, կամ երբ ունկնդրում ենք լավ, խոր երաժշտություն...»:

Այս զգացողությունները հետզհետե դարձան բանաստեղծություն դառնալ, չլնաղ բանաստեղծություն («Փողոցի երգը» «Պատուհանիս տակ լալիս է կրկին...»): Եվ ինքնահակալ լինենք այս զգացողությունների ծեւավորման ժամանակներին, այն կնոջը, որ սովորական կենցաղային անցուդարձը սիրում էր բանաստեղծություն դարձնել, սիրում էր իր սիրո ենթահիվ... Եվ մի՞թե առավել մեծ բան կարող է լինել, քան ՍԵՐԸ...

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Անջեյ Վայդան «Օսկար» կստանա

Մոտ ժամանակներս Հոլիվուդում լեհ նշանավոր կինոբեմադրիչ Անջեյ Վայդային «Օսկար» մրցանակ կհանձնվի նրա ամբողջ ստեղծագործության, մասնավորապես «Երկաթյա մարդը» (1981) եւ «Դանտոն» (1982) ֆիլմերի համար: Հին գործերից հայտնի են «Զրանցք» (1957), «Սոխիր եւ ալմաստ» (1958), «Սամսոն» (1961), «Սոխիր» (1965), «Բնապատկեր ճակատամարտից հետո» (1970), «Կեչուտ» (1971), «Հարսանիք» (1972), «Ավետյաց երկիր» (1974) ֆիլմերը:

Անցյալ տարվա հոկտեմբերից Լեհաստանի էկրաններին ցուցադրվող վերջին «Պան Տադեուշ» ֆիլմն արդեն դիտել է 6 մլն մարդ: Ֆիլմը նկարահանվել է լեհ բանաստեղծ Ադամ Միցկեւիչի (1798-1855) ստեղծագործություններից մեկի հիման վրա եւ տեւում է 3 ժամ: «Պուեն» հանդեսը տեղեկացնում է, որ Վաշինգտոնում, Վայդայի եւ գլխավոր դերակատար Դանիել Օլբրիխսկու ներկայությամբ, ֆիլմը դիտել են Հովհաննես Պողոս Բ պապը եւ բազմաթիվ եպիսկոպոսներ: Պապը, որ նախկինում դերասան է եղել, ցուցադրության ժամանակ արտասվել է, իսկ ավարտից հետո արտասանել է Միցկեւիչի երկար բանաստեղծություններից մեկը:

Պ. Ք.

ՀԱՄԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆ

Ծիծաղն ընդդեմ սրեսի

Արամայիս Սահակյանի 65 «Ծիծաղի տունը»

Ուղիղ 3 տարի, ամիսը 2 անգամ, Հայաստանի ազգային հեռուստատեսությամբ ցուցադրվում է «Ծիծաղի տուն» հաղորդաշարը, որի մշտական վարողն է «Ոգնի» երգիծաթերթի 20 տարվա գլխավոր խմբագիր, անվանի բանաստեղծ Արամայիս Սահակյանը: Մի քանի օր առաջ եթերում տեսանք 65-րդ թողարկումը՝ «Ընկեր Փանջունին ծիծաղի տանը», որին անմիջապես նախորդել էին վանեցիները, դասավորները, բժիշկները, ոստիկանները... եթե միանգամից ասենք, որ այդ 65 հաղորդումներին մասնակցել են ավելի քան 350 անվանիներ՝ դերասաններ, երաժիշտներ, գրողներ, գիտնականներ, մարզիկներ, քաղաքական գործիչներ եւ այլք, որոնք սրամիտ դեմքեր են հիշել անցյալ եւ ներկա մեծերի մասին, ապա պատկերը պարզ կլինի՝ «Ծիծաղի տունը» գալիք սերունդների համար պահպանում է մեր մեծերի ուրախ դիմանկարները: Առանձին հաղորդումներ են նվիրվել Փափազյանին, Սարոյանին, Սեւակին, Շիրազին, Փարաջանովին, Առնո Բաբաջանյանին, Հենրիկ Հովհաննիսյանին, Վարդգես Պետրոսյանին, Սերո Խանզադյանին եւ այլոց, իսկ տարբեր հաղորդումներում հանդես են եկել Գոհար Գասպարյանը, Օհան Դուրյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գեւորգ Էմինը, Կարո Խաչվանքյանը, Խորեն Աբրահամյանը, Էդվարդ Միրզոյանը, Գրիգոր Գուրզադյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Մելինե Համամջյանը, Արմեն Խոստիկյանը եւ շատ ուրիշներ, մի խոսքով՝ այսօրվա անվանիներից շատ-շատերը: «Ծիծաղի տան» բոլոր տեսագրություններ պատիպանվում են, պատրաստ է նաեւ երկժամանոց ընտրանին, որը շուտով կթողարկվի՝ որպես առանձին տեսաժապավեն: Եթե նկատի առնենք, որ հեռուստատեսությունը, ցավոք, հիմնականում չի պահպանել մեր մեծերի մասին տեսագրությունները (Պ. Սեւակից, օրինակ, ընդամենը կես րոպեի անխոս կադրեր...), ապա ավելի կարժեքավորվի այն օգտակար եւ ազնիվ գործը, որն անում է Արամայիս Սահակյանը: Իհարկե, հրավիրված ոչ բոլոր անվանիներն են կարողանում ըստ արժանվույն սրամտել եւ ծիծաղեցնել, սակայն հաղորդման նպատակը, ըստ իս, էժան շոու ստեղծելը չէ, այլ՝ մշտավորական նուրբ սրամտության շնորհիվ զվարթ մթնոլորտ ստեղծելը, նոր անվանիներին նորովի տեսնելը, հներին նորովի հիշելը, միաժամանակ՝ մեր սրբեսային ժամանակներում ծիծաղով բուժելը, որը մեծապես հաջողվում է հաղորդաշարի հերոսներին (գլխավոր բեմադրիչ՝ Հ. Գասպարյան, գլխավոր խմբագիր՝ Ս. Վարդանյան, բեմադրիչ՝ Թ. Մովսիսյան, գլխավոր նկարիչ՝ Գ. Գասպարյան):

Ինչպես ասել է գլխավոր Ոգնին՝ «Կատակելը կատակ բան չէ», «Նաեւ ծիծաղով պիտի հաղթենք», «Լավ է այն կատակը, ուր լրջություն կա տակը...» եւ այլն, ուստի զարմանալ կարելի է, թե ինչ հմտությամբ եւ հումորով է նա ներկայացնում բոլոր հյուրերին (ավելի քան 350 մարդու)՝ ամեն անգամ դիպուկ պատմելով մի քանի տասնյակ նոր կատակներ...

Իմ հարցին, թե ի՞նչ նոր տեսագրություններ են լինելու, գլխավոր Ոգնին պատմեց, որ շուտով եթերում կերեւան 4 անվանի ակադեմիկոս (փետրվարի 21-ին), 4 անվանի գեղեցկուհի (մարտի 7-ին), ըստ արժանվույն կնշվեն Սիեր Մկրտչյանի, Խորեն Աբրահամյանի 70-ամյակները, Լեոնիդ Ենգիբար- յանի 65-ամյակը, հյուր կգնան օդաչուներին, երկաթուղայիններին, հեռավոր թատրոններ, նաեւ՝ կոշի գաղութ՝ տեսնելու, թե ինչե՞ր գիտեն բանտարկյալները: Իմ երկրորդ հարցին, թե ինչպե՞ս է զգում, պատասխանեց. «Սուտ որ ասեմ՝ լավ եմ...» («Մի մարդու ասացի. «Շատ լավ եմ», ծիծաղեց: «Ինչո՞ւ ես ծիծաղում», հարցրի: «Որովհետեւ... ծիծաղելի բան ես ասում...»): Այն հարցին, թե մեր օրերում հե՞շտ է ծիծաղեցնելը, Ա. Սահակյանը պատասխանեց. «Չեր եւ մեր ծաղրանկարիչ Գ. Յարալյանը նկարում էր ինչ-որ մարդկանց, որոնք մռայլ էին: «Ժպտացեք՝ իբր թե փող եք սացել...», հուշեց նկարիչը: Այսինքն՝ շատերին հետաքրքրում է նյութականը: Մի մարդու ասացի՝ պետությանը մեկ միլիոն դրամ



պարտք ենք պատմել, ծիծաղեց, կատակեց. «Պետությունը կես միլիոն չարժե, ո՞նց եք մեկ միլիոն պարտք...»: Երբ զույգ բոլորս ծնվեցինք, ոմանք ասացին. «Իսկ սրոնսոր ունե՞ն, որ ծնվել են...»: Սա արդեն դառը ծիծաղ է: Հյուր էինք գնացել մի մտավորականի տուն, սեղանին միայն հանքային ջուր էր: Տանտերը կնոջն ասաց. «Սեղանին բացիչ չկա»: «Իբր ի՞նչ կա, որ բացիչ լինի...», դառը հեգնեց կինը: Չորս ամիս աշխատավարձ չէի ստացել, վերջապես մեկ ամսվանն ստացա, եկա տուն, բոլորիս ասացին. «Պարիկ, աշխատավա՞րձ ես ստացել»: «Դուք որտեղի՞ց գիտեք...», զարմացա: «Ինչի՞, չի՞ երեւում...», իրենց հերթին զարմացան նրանք: Այնպես որ՝ ծիծաղելու առիթներ շատ կան, միայն թե գնալով այդ ծիծաղը, ցավոք, դառնանում է: Ինչ արած, ոչինչ, կարեւորը լավատեսությունն է, չէ՞ որ չծիծաղող մարդը վտանգավոր է...

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԹՐՎՅԱԼԵՅՑ

Փետրվարի 10

- 1755 թ. մահացել է ֆրանսիացի փիլիսոփա եւ լուսավորիչ Շառլ Մոնտեսքյուն: Վոլտերի հետ միասին նա հիմք դրեց լուսավորչական շարժմանը:
- 1898 թ. ծնվել է գերմանացի գրող եւ արվեստի տեսաբան Բերտոլդ Բրեխտը, որի լավագույն պիեսները՝ «Կոպեկանոց օպերան», «Արթուր Ուիի կարիերան», «Կուրաժը, մայրիկը եւ նրա երեխաները»:
- 1890 թ. ծնվել է ռուս բանաստեղծ եւ արձակագիր Բորիս Պաստերնակը:
- 1903 թ. ծնվել է խորհրդային ռուս կոմպոզիտոր Մատվեյ Բլանտերը:
- 1935 թ. ծնվել է գրող, հրապարակախոս, քաղաքական գործիչ Զորի Բալայանը:

ԼԱՍԲԱ ԹԱՊԵՔԱՍՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Ծիcs ուղի ենք ընտրել»

Մամուլի ասուլիս ՀՖՖ-ում

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում երեկ տեղի ունեցավ ՀՖՖ-ի նախագահ Սուրեն Աբրահամյանի եւ Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանի մամուլի ասուլիսը, որը նվիրված էր երկրի հավաքականի Կիպրոսի միջազգային մրցաշարում ունեցած ելույթին: Իհարկե, արծարծված հարցերը ավելի շատ էին:

Ասուլիսի սկզբում ֆեդերացիայի նախագահ Սուրեն Աբրահամյանը նշեց, որ հունվար եւ փետրվար ամիսների երկու մրցաշրջանային մրցումները շատ հարցերի պատասխան ստանալու հիանալի հնարավորություն էին մեր ազգային հավաքականի համար: Վերակազմավորված թիմի կազմը, առանձին ֆուտբոլիստների հնարավորությունները որոշելու համար հասկանալի էր կիպրոսյան մրցաշարը: Այստեղ ամեն ինչ կազմակերպված էր բարձր մակարդակով, կային բոլոր պայմանները մարզվելու եւ խաղալու համար: Բարեբախտություն էր Մոլդովայի, Կիպրոսի եւ Վրաստանի ուժեղ թիմերի հետ մրցելու հնարավորությունը, ինչի շնորհիվ թիմի ղեկավարները լավագույնս պատկերացում կազմեցին մեր ֆուտբոլիստների ուժեղ ու թույլ կողմերի մասին, որոշեցին կարեւորագույն անելիքները:

Մեր հավաքականը երեք խաղերից մեկում հաղթեց, իսկ երկուսում պարտություն կրեց: Բայց այդ երկուսում էլ հուսադրող խաղ ցուցադրեց: Մրցաշրջանայությունը ցույց տվեց, որ մեր ֆուտբոլիստներն այս ամիսներին զիջում են ֆիզիկական, ֆունկցիոնալ պատրաստականությամբ: Ուրախալի է, որ մեր տղաները բարոյականային բարձր հատկանիշներ, պայքարելու մեծ ձգտում դրսեւորեցին: Պրն Աբրահամյանը փաստեց, որ թարմացված կազմով հանդես եկած հավաքականը, որը դեռ փնտրտուքների մեջ է, ակտիվ, հարձակողական խաղաոճ է ընտրել: Մեր ֆուտբոլիստները ձերբազատվում են որոշ բարդույթներից, մասնավորապես լավ են օգտագործում ստանդարտ իրադրությունները, բարելավել են գլխով խաղը, գոլ բաց թողնելուց հետո էլ շարունակում են մեծ եռանդով պայքարել:

Ֆեդերացիայի նախագահը նշեց, որ մեր հավաքականը կարող է շատ ավելի բարձր խաղամակարդակ ցուցադրել: Թիմը կարող են ուժեղացնել մի քանի ֆուտբոլիստներ, որոնք տարբեր պատճառներով Կիպրոս չէին մեկնել: Այժմ ավելի քան մեծացել է մրցակցությունը երկրի գլխավոր թիմում տեղ գրավելու համար, յուրաքանչյուր տեղի համար 2-3 խաղացող է պայքարում: Պրն Աբրահամյանը շատ կարեւոր համարեց, որ եւ Վարուժան Սուքիասյանը, եւ ֆուտբոլիստներն իրենց գործին վերաբերվում են մեծ նվիրումով: Եվ խաղային, եւ բարոյահոգեբանական որակները հույս են ներշնչում, որ մեր ֆուտբոլիստները կարող են արժանի մրցակցություն ցույց տալ ուժեղագույն թիմերին եւ, ինչու չէ, նաեւ անակնկալներ մատուցել: Ֆեդերացիայի նախագահը նշեց, որ գլխավոր մարզիչը հավաքականում ընդգրկում է այն խաղացողներին, որոնք այդ պահին լավ են խաղում, պայքարելու ցանկություն ու կամք են դրսեւորում: Սուրեն Աբրահամյանը խիստ կարեւորեց հանրապետությունում ընդհանուր առմամբ ֆուտբոլի վիճակը, ֆուտբոլային տնտեսությունը կարգավորելու խնդիրը: Նշեց, որ պետք է իրենց աշխատանքները վերակառուցեն ակումբները:

Հավաքականի գլխավոր մարզիչ Վարուժան Սուքիասյանն ասաց, որ մրցաշրջայությունները ցույց տվեցին, որ ծիcs ուղի է ընտրված: Իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին հատկապես երիտասարդ ֆուտբոլիստները: Սակայն անելիքները շատ են, դեռ մեծ աշխատանք կա առջեւում: Պետք է շատ աշխատել, իսկ փորձ ձեռք բերելու համար խիստ անհրաժեշտ են հավաքները, այլ թիմերի հետ հանդիպումները: Պրն Սուքիասյանը ենթադրաբար (եւ ինքնաբերաբար) էր տրամադրված: Ներկաների համար պարզ էր, որ դա բխում է գլխավոր մարզչի պահանջկոտությունից, առավելագույնին ձգտելու հատկությունից: Կարծում ենք, որ դա առաջադիմության երաշխիք է: Արդեն այժմ մեր թիմը բավականին լավ տրամադրություն թողեց մասնագետների վրա: Հենց դա է պատճառը, որ մի քանի երկրների հավաքականներ (Ռուսաստան, Վրաստան, Լիտվա, ԱՄՆ, Մեքսիկա, Իսրայել...) ցանկություն են հայտնել ընկերական հանդիպումներ անցկացնել մեր ընտրանու հետ:

Ռ. Ա.

Խաղացանկ

Եվրոպական 5-րդ խմբի

Աշխարհի 2002 թ. առաջնության ընտրական փուլի եվրոպական 5-րդ խմբում ընդգրկված Նորվեգիայի, Ուկրաինայի, Լեհաստանի, Հայաստանի, Ուելսի եւ Բելառուսի ներկայացուցիչները Վարշավայում ճնշարկեցին խմբային մրցաշարի խաղացանկը: Հայաստանը ներկայացնում էին ՀՖՖ-ի գլխավոր քարտուղար Արման Հովհաննիսյանը եւ ՀՀ հավաքականների տնօրեն Արմեն Խանդանյանը: Կողմերին չհաջողվեց համաձայնության գալ: Այդ պատճառով վիճակահանությամբ ընտրվեցին թիմերի համարները, որից հետո օգտագործվեց ՖԻՖԱ-ի խաղացանկը: Այն ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

2000 թ.

2-3 սեպտեմբեր
Նորվեգիա-Հայաստան
Ուկրաինա-Լեհաստան
Բելառուս-Ուելս

7-8 հոկտեմբեր
Հայաստան-Ուկրաինա
Լեհաստան-Բելառուս
Ուելս-Նորվեգիա

10-11 հոկտեմբեր
Բելառուս-Հայաստան
Նորվեգիա-Ուկրաինա
Լեհաստան-Ուելս

2001 թ.

24-25 մարտ
Հայաստան-Ուելս
Ուկրաինա-Բելառուս
Նորվեգիա-Լեհաստան

27-28 մարտ
Լեհաստան-Հայաստան
Բելառուս-Նորվեգիա
Ուելս-Ուկրաինա

2-3 հունիս
Հայաստան-Բելառուս
Ուկրաինա-Նորվեգիա
Ուելս-Լեհաստան

5-6 հունիս
Հայաստան-Լեհաստան
Նորվեգիա-Բելառուս
Ուկրաինա-Ուելս

1-2 սեպտեմբեր
Ուելս-Հայաստան
Բելառուս-Ուկրաինա
Լեհաստան-Նորվեգիա

4-5 սեպտեմբեր
Ուկրաինա-Հայաստան
Բելառուս-Լեհաստան
Նորվեգիա-Ուելս

6-7 հոկտեմբեր
Հայաստան-Նորվեգիա
Լեհաստան-Ուկրաինա
Ուելս-Բելառուս

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Վարկանիշային միավորների համար

Ֆրանսիայի Կլերմոն Ֆերան քաղաքում անցկացվեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշար, որտեղ շնորհվում էին նաեւ Սիդնեյի օլիմպիական խաղերի վարկանիշային միավորներ: Մրցումներում Հայաստանը ներկայացրին Արտաշես Մինասյանը (54 կգ քաշային կարգ), Կարեն Մնացականյանը (58 կգ), Մովսես Կարապետյանը (69 կգ) եւ Խորեն Պապոյանը (97 կգ): Նրանցից երեքը կարողացան միավորներ վաստակել. Մնացականյանը գրավեց 4-րդ, Պապոյանը՝ 7-րդ, Կարապետյանը՝ 9-րդ տեղը:

Առաջիկայում նոր ընտրական մրցաշարեր են անցկացվելու, որոնցում հանդես կգան նաեւ մեր հանրապետության ներկայացուցիչները: Դրանցից մեկը տեղի կունենա Տաշքենդում (Ուզբեկստան), փետրվարին, մյուսը՝ Ալեքսանդրիայում (Եգիպտոս), մարտին:

Ավելացնենք, որ Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբիշներից օլիմպիական ուղեգրեր առայժմ նվաճել են Լեւոն Գեղամյանը (85 կգ) եւ Հայկազ Գալստյանը (130 կգ):

Գավաթակիրը Չեխիայի հավաքականն է

Հոնկոնգում անցկացվեց Կարլսբերգի գավաթ անվանումը կրող ֆուտբոլի մինի-մրցաշար, որտեղ 4 երկրների ազգային հավաքականներ հանդես եկան: Մրցումներն անցկացվեցին օլիմպիական մրցակարգով:

Կիսաեզրափակիչներից մեկում Մեքսիկայի հավաքականը 1-0 հաշվով պարտության մատնեց Ճապոնիայի ընտրանուն: Մյուսում, որտեղ հանդիպեցին Չեխիայի եւ Հոնկոնգի հավաքականները, ոչ-ոքի (2-2) գրանցվեց, եւ հաղթողը որոշվեց լրացուցիչ 11 մ հարվածների միջոցով: Ավելի դիպուկ գտնվեցին չեխ ֆուտբոլիստները, որոնք եզրափակիչի երկրորդ մասնակիցը դարձան: Հենց Չեխիայի հավաքականն էլ նվաճեց գլխավոր մրցանակը՝ եզրափակիչ խաղում 2-1 հաշվով հաղթելով Մեքսիկայի հավաքականին: Երրորդ տեղի համար կայացած ճապոնիա-Հոնկոնգ հանդիպման ժամանակ հաշիվը չբացվեց: 11 մ հարվածներն ավելի հաջող իրացրեցին ճապոնացիները, որոնք էլ հաղթող ճանաչվեցին:

ՍԿԱՆՎՈՐԴ



Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Գերմանիա: 2. Էկրան: 3. Միգրեն: 4. Հրանուշ: 5. Աշոտ: 6. Դարիբյան: 9. Ազարյան: 13. Ամազոնուհի: 14. Էմիլեմսիա: 16. Վարսանդ: 17. Շարական: 22. Մոլորակ: 23. Այբմատով: 25. Գիլիոտին: 28. Կարաստ: 29. Կարդեն: 30. Մագնա: 32. Համամ:

Հորիզոնական

7. Լեյկոցիտ: 8. Զրբաբյան: 10. Ամրան: 11. Երդիկ: 12. Հերբարիում: 15. Լիզոնա: 18. Սոիտակ: 19. Բալայան: 20. Գրոտեսկ: 21. Վարդենի: 24. Մնջոյան: 26. Այդահո: 27. Ցիանիտ: 31. Ֆանարջյան: 33. Հագար: 34. Դավոս: 35. Մոնմարտր: 36. Շենգավիթ:

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՆՈՏԱՐԴԱՆ

Խորհրդարանը հիշեց ազգային անվտանգության եւ սեփականաշնորհման մասին

Սկիզբը էջ 1

ԱԺՄ խմբակցության կողմից Դավիթ Վարդանյանը համաձայնեց Վիկտոր Դալլաքյանի մոտեցումներին՝ վկայակոչելով հեռահաղորդակցության ոլորտում Հայաստանի գործած սխալները: Ամենեղի սեփականաշնորհումը, որն ավարտվեց Հայաստանի հեռահաղորդակցության համակարգը հունական կիսաոլեական OTE-ի ընկերությանը հանձնելով՝ չունեցավ ոչ մի դրական արդյունք: Մեր պետությունը հեռահաղորդակցության ոլորտի իր գործառույթները զիջեց Հունաստանին՝ փոխարենը չստանալով խոստացված ներդրումները: Հայաստանի հեռահաղորդակցության ցանցը մենաշնորհային սեփականատիրոջ ձեռքերում չի զարգանում, իսկ ոլորտի շահույթները փոխանակ ուղղվելու ՀՀ պետբյուջե, համալրում են, ըստ էության, հունական ընկերության ակտիվները: Հայաստանն այլեւս իրավունք չունի սխալվելու:

«Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անդամ Հայկ Բաբուխանյանը հետեց, որ շրջափակման պայմաններում գտնվող մեր պետությունը սեփականաշնորհելով իր բաբախիչ ցանցերը, վտանգում է ազգային անվտանգությունը: Հայաստանում զարգացվում է էներգետիկայի հենց այն ոլորտը, որտեղ մեր ներուժը կասկածելի է: Այսպես՝ Հայաստանը կարեւորում է ջերմային էլեկտրակայանների կառուցումը եւ վերագործարկումը (վկա՝ Դավոսում էյ-Բի-Բի ընկերության հետ 80 մլն դոլարի երեւանի նոր ՋԷԿ-ի կառուցման ծրագիրը, ինչպես նաեւ Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության ուղղությամբ տարվող բանակցությունները), այնինչ ՋԷԿ-երի աշխատանքի համար Հայաստանին անհրաժեշտ է էներգակիրների ներկրում, ինչն անընդմեջ շրջափակումների սպառնալիքի ենթակա մեր պետության համար չի կարող լինել առաջնային: Հայաստանը պետք է փորձի զարգացնել այնպիսի էներգետիկ ուղղություններ, որոնք ուղղակի կախվածության մեջ չեն դրսից բերվող էներգակիրներից՝ ՀԷԿ-եր, նոր ԱԷԿ, այլընտրանքային էներգետիկ աղբյուրներ: Այս տեսակետին համակարծիք էին նաեւ «Օրինաց երկիր» խմբակցությունը եւ Հայկոմկուսը: ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանը փորձեց էներգետիկ հանձնաժողովի ծրագրի քննարկումը հետաձգել վտանգավոր հունից, աղարդյուն: Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Վարդան Խաչատրյանն առավել գործնական էր. նա խորհրդարանին հայտնեց, որ փետրվարի 15-ին ԱԺ-ում շահագրգիռ նախարարությունների հետ կքննարկվի Հայաստանի էներգետիկ զարգացման հայեցակարգը, որի ժամանակ պատգամավորները կարող են ավելի բարձր ՕԳԳ-ով բանավիճել ե՛ւ սակագնի կառուցվածքի, մեծության, ե՛ւ էներգետիկայի բնագավառում սեփականաշնորհման ձեւերի մասին: Բացի այդ՝ էներգետիկ բաբախիչ ցանցերի սեփականաշնորհման կառավարական հանձնաժողովի կազմում ընդգրկվել են երկու պատգամավոր՝ Գագիկ Մինասյանը «Միասնությունից» եւ Սեյրան Ավագյանը «ԱԺՄ»-ից: Վարդան Խաչատրյանը հաշտարար էր. «Կառավարությանը չդնենք ծանր վիճակում, նախարարները վախենում են աշխատել»:

Ներկա ԱԺ-ն ժառանգել է նախորդների ընդունած սեփականաշնորհման ցանկը

Էներգետիկայի նախարար Դավիթ Զադոյանին հարցուփորձի ընթացքում Արթուր Բաղդասարյանն առաջինն ուղղեց բաբախիչ ցանցերի սեփականաշնորհման նպատակահարմարության հարցադրումը: Նախարարը հակիրճ էր. «Ցանցերի սեփականաշնորհումն ընթացքի մեջ է, որովհետեւ այդպես է որոշել ԱԺ-ն: Ցանցերն ընդգրկված են սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունների ցանկում, եւ մենք որպես գործադիր մարմին սխրված ենք դա իրականացնել: Վարչապետի ստորագրությամբ ստեղծված հանձնաժողովը մշադիր է սեփականաշնորհումն իրականացնել որքան հնարավոր է բարձրագույն»: Էներգետիկ համակարգի սեփականաշնորհումից շահելո՞ւ է պետությունը, թե՞ ոչ, եւ ի՞նչ երաշխիք կա, որ սակագները չեն բարձրանալու, համակարգն էլ չի մնալու նույն բերզարգացող վիճակում, ինչի ականատես ենք Ամենեղի օրինակով, Դավիթ Զադոյանն արձագանքեց փիլիսոփայորեն՝ էներգետիկ հանձնաժողովի ծրագրում նշված է, որ մինչեւ 2002 թ. էներգետիկ սակագինը չպետք է փոխվի, ինչու կանխավ ենթադրել, որ 2002 թ. հետո սակագինը կփոխվի դեպի բարձրացում եւ ոչ իջեցում, Դավիթ Զադոյանի լավատեսությանը, սակայն, պատգամավորները վերաբերվեցին արդարացի թերահավատությամբ: Շեշտենք նաեւ, որ «Իրավունք եւ միաբանություն» խմբակցությունն առաջարկեց էներգետիկ հանձնաժողովի նախագահ Վարդան Սովսիսյանին՝ էլեկտրաէներգիայի սակագինը նվազեցնել 3 դրամով՝ խոստանալով դրա տեխնիկատնտեսական հաշվարկ-հիմնավորումները ներկայացնել: Կոմկուսի խմբակցության անունից Լեոնիդ Հակոբյանն առավել արմատական էր. սակագինը կարելի է նվազեցնել անգամ 5 դրամով: Վարդան Սովսիսյանը խոստացավ պատգամավորների հետ մանրամասն քննարկել էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկում ներառված ծախսերի կառուցվածքը:

ԱԺ-ն խորհրդարանին երեկ ուղղեց բազմաբնույթ հարցեր, սակայն դրանց մեծամասնությունը տեղական նշանակության խնդիրներ էին՝ իրենց տարածքի ձեռնարկություններին բյուջեի ունեցած պարտքերը, ճանապարհների անբարվոք վիճակը... Օրվա հերոսը Ֆինանսների նախարարն էր, որից բոլորը պահանջում էին աշխատավարձ, նպաստներ եւ թոշակ: Լեւոն Բարխուդարյանը փորձեց հուսադրել՝ փետրվարին կառավարությունը նախատեսում է հավաքել 13 մլրդ դրամ եկամուտ, որի շնորհիվ կծածկվեն հունվարի պարտքերը: Հիշեցնենք, որ հունվարին պետությունը կարողացել է հավաքել 7 մլրդ եկամուտ: Փետրվարին հավաքված 13 մլրդ գումարը թույլ կտա ծածկել 1 ամսվա աշխատավարձի պարտքը, ինչպես նաեւ 1999 թ. դեկտեմբերի ընտանեկան նպաստների պարտքերը, բայց առողջապահության ոլորտում կուտակվել են եռամսյակային պարտքեր, իսկ աղեցի գոտում, պատգամավոր Սուքիաս Ավետիսյանի ներկայացմամբ, բյուջեի պարտքերը տարբեր ոլորտներում 7-5 ամիս վաղեմություն ունեն:

Որտեղ ջարդենք դուռը ու կջարդենք

Վարչապետ Արամ Սարգսյանը պատասխանելով պատգամավորներից մեկի հարցին, թե ինչո՞ւ լիբանանցի սեփականատիրոջ Մասիսի գործածների գործարանը չի աշխատում, անկեղծ ասաց. «Ուզում է աշխատեցնում է, ուզում է՝ ոչ», երբ ԱԺ-ն ընդդիմացավ, գործնական առաջարկեց համապատասխան օրենք ընդունել. «Որտեղ ջարդենք դուռը ու ջարդենք», իսկ երբ Արշակ Սադոյանը վարչապետին առաջարկեց գործադիր իշխանության պատասխանատվության հայեցակարգ մշակել, ըստ որի ԱԺ-ն հնարավորություն կունենա համապատասխան նախարարներին հեռացնել, ազատել նաեւ վարչապետին, եթե տարալվում է կառավարության ամբողջական ծրագիրը, Արամ Սարգսյանը հայտարարեց. «Բավականին լավն է ձեր առաջարկը, ես պատրաստ եմ, նոր խաղի կանոններ են, հասկանում եմ: Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա աշխատանքի ծրագիր եւ օրվա վերջում էլ պատասխանի, թե ինչ է իրականացրել... ԱԺ-ն պետք է վերահսկի»: Կարող ենք եզրակացնել, որ վարչապետը համաձայն է Սահմանադրությամբ ԱԺ-ին նոր լիազորություններ տրամադրելու՝ կառավարության աշխատանքը վերահսկելու ոլորտում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Լեռներում թաքնվել են մոտ 7 հազար չեչեն մարտիկներ

ՄՈՍԿՎԱ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ռուսական զորքերը փորձում են կտրել այն ճանապարհները, որոնցով չեչենական ջոկատները հեռանում են Չեչնիայի հարավ: Ռուսական ավիացիան շարունակում է ռմբակոծել Արգունի եւ Վեդենոյի կիրճերը, որտեղով անցնում են չեչենների մասակարարման ուղիները: Եղած տվյալներով, լեռներում թաքնվել են մոտ 7 հազար չեչեն մարտիկներ: Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, թեեւ ռուսական հրամանատարությունը պնդում է, որ Գրոզնին գրավված է, խաղաղ հրետակոծությունը շարունակում է: Ռուսական կողմի տվյալներով, խաղաղում մնում են մոտ 300 չեչեն մարտիկներ: Իրականացվում է խաղաղային քաղաքացիների սանրման գործողություն: Արտակարգ իրավիճակների նախարար Սերգեյ Շոյգուն հաղորդել է, որ Գրոզնիում մնացել են 10 հազար խաղաղ բնակիչներ եւ նրանց մեկ երրորդը բուժօգնության կարիք ունի: ԵՄ-ը ռուսական իշխանություններից պահանջել է Չեչնիա թողնել միջազգային մարդասիրական կազմակերպություններին:

Լոնդոնի ուղղակի կառավարո՞ւմ Հյուսիսային Իռլանդիայում

ԼՈՆԴՈՆ, 9 ՓԵՏՐՎԱՐ, ՏՆՏՐՔ: Այսօր գիշերը Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Համայնքների պալատի արտահերթ նիստում ձայների մեծամասնությամբ ընդունվել է օրինագիծ Հյուսիսային Իռլանդիայում Լոնդոնի ուղղակի կառավարում մտցնելու մասին: Հյուսիսային Իռլանդիայի իշխանության տեղական մարմինները գրեթե երկու ամիս ինքնուրույն կառավարում էին նահանգը: Այժմ նրանց լիազորությունները կկասեցվեն, եթե օրինագծին հավանություն տան Լորդերի պալատն ու Մեծ Բրիտանիայի թագուհին: Ներկայիս ճգնաժամի հիմնական պատճառը Հյուսիսային Իռլանդիայի ընդհատակյա զինված կազմակերպությունների հետ երկխոսություն սկսելու եւ դրանց զինաթափմանը հասնելու Լոնդոնի անհաջող փորձն է:

AED

Academy for Educational Development

POSITION AVAILABLE

Energy Program Assistant

Immediate opening at Academy for Educational Development for Energy Program Assistant.

Duties and Responsibilities: The Energy Program Assistant is responsible for assisting in all aspects of the Energy Sector Training Programs. Specific responsibilities and duties include, but are not limited, to the following:

1. Assist the Energy Program Specialist with making phone calls to the participants and partner organizations, arrange meetings and attend when requested
2. Assist in arranging timely receipt of instructional material from training provider and its translation; review the translated instructional material and advise on its quality
3. Register participants at the reception desk at each of the training event
4. Assist Energy Program Specialist in preparation of final reports at the conclusion of all programs
5. Assist with organizing preparation and dissemination of newsletters and other relevant information on AED's Energy Sector training programs
6. Provide written translation of participant data sheets, training questionnaires, training materials and other documents as needed
7. Assist the Energy Program Specialist with preparation of budget worksheets, task orders and reports, assist with reviewing financial reports and analyses on Energy Sector training programs

Education and Experience Required:

- University graduate with degree in Energy or Economics
- At least three years previous work experience in related field or activity
- Fluent in English; must be able to do translation (both written and oral) from Armenian to English and English to Armenian
- At least two years experience working with computers, especially electronic spreadsheets (e.g., Excel) and word processing programs.

Application must be received by Friday, February 18, 1999.

Please e-mail, fax, or deliver in person your application to AED/Armenia office.

54A Aygedzor Lane, Yerevan

Ph: (3742) 27-17-20; 27-70-08; 27-43-98 FAX: (3742) 151-945 Gov: 74-02

Email: aed@arminco.com

JOB OPENING

Prominent International Organization is seeking a qualified *Finance Assistant* for the Kamurj Microfinance Program.

Responsibilities include:

- Complete timely and accurate financial statements (balance sheets, income statements, loan performance indicators) on a monthly basis
- Prepare monthly budget projections and cash flow
- Input data for repayment and disbursement Information into the Management Information System
- Assist with loan approval, processing, and preparation of loan contracts
- Maintain program filing and documentation as necessary

Qualifications:

- Fluent English
- Western accounting, financial degree (or relevant experience)
- Computer skills - Microsoft Excel, Word
- Detail oriented and highly organized
- Excellent communication/interpersonal skills

If you are interested, please send or fax ***by Wednesday, February 23*** your curriculum vitae and the names and telephone numbers of three references to Attn: Kamurj Microfinance Department, CRS Armenia, 13/14 Azgagrakan Street, Dzoragiugh, Yerevan, Armenia, Fax: 151-524, Email: Elissa@crs.am

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԿԱՐԳԵՐ

10 փետրվար

9.00 Հայկոր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բարձունքով»
10.20 Մամուլի կրկնակ
10.30 Բարեկոնից հետո. Շինարարան 2
11.00 Գ/Ֆ «Այդպես մի արա»
12.35 Մուլտֆիլմ «Ռիկի Տիկի Տավի»
13.00 Հայկոր
13.20 Ռուբինոն+
17.00 Հայկոր
17.20 Մուլտֆիլմեր «Զզզված ճճճդուկը», «Ավազակներ եւ երաժիշտներ», «Գոտեմարտը փնտրում է հորը»
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բարձունքով»
19.00 Լուր
19.10 Խոսոր շահում
19.50 Սկսել Բակունց. կյանքի էջեր (Ինն հատոր)
20.25 Արտակարգ ադիմ
20.35 Տուն-տունիկ
21.00 Հայկոր
21.40 Հեռուստակարտալոգ
21.50 Պրեմիերա
22.00 Բարի ակնթարթ
22.50 Հեռուստամարաթոնի էջերից
23.10 Հիթ մերթ
23.40 Հայկոր
00.00 Կեսգիշերային ծնողնթաց
01.00 Ռուբինոն+

Պրոմնթեաս

9.05 Վաղ առավոտյան
10.00 Մուլտֆիլմ
10.20 Բնության արգելանոցներ. Կորբեն
10.35 «Սոսկալի եւ ընկ.»
10.55 Գ/Ֆ «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» (4-րդ մաս)
12.10, 18.05, 20.30, 24.00 Լուրեր
18.20 Մուլտֆիլմ
18.35 «Բարեկամություն» մանկական անսամբլի ելույթը
19.05 Սերիալ «Ընտանեկան ալբոմ» (2-րդ մաս)
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
21.00 «Ներշնչանք». Էդուարդ Արծուունյան 70
21.30 Գ/Ֆ «Սոյաները»
23.15 Լուրեր (օրստրեն)
23.30 Ուշ երեկոյան

9

9.00 Տոնար
11.00 Կամ-կամ (կրկնություն)
19.00 Մամուլի խոսնակ
19.10 Շղջիկ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Գ/Ֆ «Դելտա» ջոկատի գործողությունը»
22.05 Քոնիկոն
22.15 Ի դեղ
22.40 Սարյարեզ
23.15 Հրաշքստակ
24.00 գրո ժամ
00.05 Գ/Ֆ «Սահացու երեկո» (վերջին Սուրհանդակ)

1

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտերիալ «Ուրախության ուսուցողները»
16.45 Վիկտորինա երեխաների համար
17.00 «100 տոկոս» ծրագիրը
17.25 ... Սինդեռ. 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Կայարանում
19.55 Գործընթաց
20.50 Սերիալ «Տոկոն աղջիկները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Ողջույն սեփականատեր Չարլիից» (դերերում Ս. Զոտով, Վ. Երմոլենկո, 1998 թ.)
00.30 «Նայիր» ծրագրի մրցմիերա
01.00 Նորություններ
01.15 Գ/Ֆ «Թրխկոցի տղան» (դերերում Դ. Ուայլդեր, Ֆ. Ֆոռդ, Ռ. Բիրդ, ԱՄՆ, 1979 թ.)

РТР

7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանումն է
10.20 Հոմեոպաթիա եւ առողջություն
10.30 Հեռուստահանդես «Մենք սիրտ»
11.00 Հոմեոպաթիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
11.55 Գ/Ֆ «Նենգ հարազատը» (Հնդկաստան, 1-ին սերիա)
11.30 Իմ XX դար
13.25 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում
13.50 Հոմեոպաթիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց խաղ»
15.10 Սերիալ «Մնոնելա»
16.00 Սերիալ «Վայրի հրեշաձկը»
16.50 Մուլտֆիլմ
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Մուլտծրագիր
18.20 Ուշատակ
19.05 Սերիալ «Լոս Անջելեսի տարը 2»
20.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքները»
21.25 «Սոցիալական թատրոն» ակումբ
22.45 Կինոյի ժամ. Մայա Բուլգակովան եւ վիա չեսլավ Շալեւիչը «Սերում» ֆիլմում
00.30 Կինո+TV
01.45 Հերթապահ բաժանումն է
02.20 Ջեմ սասնյակ
03.15 Խանութ բազմոցի վրա

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
BMW-325
մակնիշի
ավտոմեքենա
(6 ցիլինդր):
Գինը պայմանագրային:
Հեռ.՝ 522466

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Հեռ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Պատուեր 1197 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 9. 02. 2000 Գինը՝ 100 դրամ